



Միգրացիայի միջազգային
կազմակերպություն



Եվրոպական միություն



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**



IOM • OIM

Միգրացիայի
միջազգային
կազմակերպություն



Եվրոպական միություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Երևան
Տիգրան Մեծ
2013

ՀՏԴ 314.7
ԳՄԴ-60.7
Հ 247

Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի վերաբերյալ ելակետային
Հ 247 հետազոտություն/ Միգրացիայի միջազգային կազմակերպություն: - Եր.: Տիգրան Մեծ, 2014.- 62 էջ:

Ձեկույցը պատրաստվել է Եվրոպական հանձնաժողովի և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների սրեղծմանը» տարածաշրջանային ծրագրի և ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման և վերադարձի գործընթացի արդյունավետ կառավարման կարողությունների զորացում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում

Ձեկույցի մեջ ներկայացված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր կերպով չեն արտահայտում Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետները: Սույն զեկույցի մեջ կատարված նշումները և ներկայացված նյութը որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի կամ դրա իշխանությունների կամ դրա սահմանների իրավական կարգավիճակի վերաբերյալ ՄՄԿ-ի կողմից որևէ տեսակետի արտահայտում չեն ենթադրում:

ՄՄԿ-ը հավատարիմ է այն սկզբունքին, որ քաղաքակիրթ և կանոնակարգված միգրացիան շահավետ է միգրանտների և հասարակության համար: ՄՄԿ-ի՝ որպես միջկառավարական կազմակերպության փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ ուղղված է միգրացիայի ոլորտի գործառնական մարտահրավերների լուծմանն աջակցելուն, միգրացիայի հետ կապված խնդիրներն առավել խորը ըմբռնելուն, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական զարգացմանը խթանելուն, ինչպես նաև միգրանտների մարդկային արժանապատվությունը պահպանելուն ու բարեկեցությունն ապահովելուն:

Հեղինակ՝ Վահե Մամբրեյան



International Organization for Migration (IOM)
Organisation Internationale pour les Migrations (OIM)
Organización Internacional para las Migraciones (OIM)

Հրատարակիչ՝

**Միգրացիայի միջազգային կազմակերպության
Հայաստանի առաքելություն.**

Հայաստան, քաղ. Երևան, 0010, ՄՄԿ-ի տուն, Պետրոս Ադամյան 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92
Ֆաքս՝ (+374 10) 54 33 65
<http://www.iom.int>

ՀՏԴ 314.7
ԳՄԴ-60.7

© 2013 Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)

Բոլոր իրավունքները պահպանված են: Սույն հրատարակման ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական-որոնողական համակարգում, կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման, գրառման կամ այլ կերպ՝ առանց հրատարակչի նախնական գրավոր համաձայնության:

ISBN: 978-99941-0-593-9

Բովանդակություն

1	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
1.1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	9
1.2	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ.....	10
1.3	ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ.....	10
2	ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
2.1	ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....	12
2.2	ՆԵՐԳԱՂԹԻ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	13
2.2.1	Ազգությամբ հայերի ներգաղթը	13
2.2.2	Այլ ազգություն ունեցող անձանց ներգաղթը	14
2.3	ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ	14
3	ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	16
3.1	ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՍՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....	16
3.2	ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ.....	17
3.2.1	Միգրացիայի կարգավորման մասին միջազգային կոնվենցիաները և համաձայնագրերը.....	18
3.2.2	Միգրացիայի կարգավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքները.....	19
3.2.3	Հայաստանի Հանրապետությունում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը	24
3.3	ԱԶՁՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	26
3.4	ՄԻԳՐԱՑԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	27
4	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	30
4.1	ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	30
4.1.1	Պետական գերատեսչությունները	30
4.1.2	Միջազգային կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության կառույցները	33
4.2	ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....	34
4.3	ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱՆՈՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ	35
5	ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	37
5.1	ՍԱՀՄԱՆ ՍՊՈՐՏԻՆԻ ՀԱՏԵԼԸ.....	37
5.2	ԵՐԿՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻՑ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՆԵՐԳԱՂԹԱԾ ԱՆՁԻՆՔ	40
5.3	ԱՊԱՏԱՆ ԵՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՀԱՅՈՂՆԵՐԸ	41
5.4	ԹՐԱՑԻՔԻՆԳԸ և ՄԱՔՍԱՆԵՆԳ ՃԱՆԱՊԱՐԿՈՎ ՏԵՂԱՓՈՒՈՒՄԸ	44
5.5	ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ.....	44
6	ԱՆԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ	46
6.1	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՁԱՎԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐԸ	46

6.2.	ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	46
6.3.	ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈՒ	49
7.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	52
7.1	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ (ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐ)	52
7.2.	ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ	60
7.3.	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ	62

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1 - Օսարերկրացիներ և քաղաքացիություն շտեյնցող առաջինը, որոնք տոնքը Հայաստանի Հանրապետություն տերթվել է, եվ որոնք Ձերբապալվել են ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ, 2012թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1- 2013թ. ՀՈՒՆԻՍԻ 30.....	38
Աղյուսակ 2 - Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու ժամանակ բացառացված առաջինը, առաջ, 2012 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-2013թ. ՀՈՒՆԻՍԻ 30.....	40
Աղյուսակ 3 - Հայաստանի Հանրապետությունում առաստան ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ, 2012թ.-2013թ. (9 առիտ)	42
Աղյուսակ 4 - Օսարերկրացիներ և քաղաքացիություն շտեյնցող առաջինը, որոնք ստացել են ԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐ, 2012թ.-2013թ. (1-ին ԿԵՍ).....	43
Աղյուսակ 5 - Օսարերկրացի ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ, առաջ, 2010-2013թթ.....	45
Աղյուսակ 6 - Հայաստանի Հանրապետությունում առկան կարգավիճակով ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	50
Աղյուսակ 7 - Հարցազրույցի մասնակցած ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	60
Աղյուսակ 8 - Վերանսննված ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ.....	62

Հապավումների ցանկ

Սույն փաստաթղթի մեջ օգտագործվել են հետևյալ հապավումները՝

ՆՔՊԿՎ	Ներման, քաղաքացիության, պարզների և կոչումների վարչություն
ՍՎՍԶ	Սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատ
ՀՎ	Հյուպատոսական վարչություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՍԿՏՀ	Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿՀՊԳՎ	Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՄԿԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՍՆ	Սփյուռքի նախարարություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԱՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՏԿՆ	Տարածքային կառավարման նախարարություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԱՎՎ	Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ԶՊԾԳ	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն
ՄՊԾ	Միգրացիոն պետական ծառայություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄԱԿ ՓԳՀ	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
ԵՊՃՀ	Երևանի պետական ճարտարագիտական համալսարան
ԵՊԼՀ	Երևանի պետական լեզվաբանական համալսարան
ԵՊԲՀ	Երևանի պետական բժշկական համալսարան
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի վերաբերյալ ելակետային հետազոտությունն անց է կացվել Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) «Աջակցություն՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների ստեղծմանը» տարածաշրջանային ծրագրի (ծրագիրն իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի և Միգրացիայի միջազգային կազմակերպության Զարգացման հիմնադրամի, Շվեյցարիայի և Բելգիայի կառավարությունների ֆինանսավորմամբ) և «Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման և վերադարձի գործընթացի արդյունավետ կառավարման կարողությունների զորացում» տարածաշրջանային ծրագրի (իրականացվում է ՄՄԿ Զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ) շրջանակներում:

Հետազոտությունում ուսումնասիրվել է և փորձ է արվել գնահատել Հայաստանում անկակոն միգրացիան՝ շեշտը դնելով ներգաղթի վրա, ինչի շնորհիվ ուսումնասիրությունը նորարական է:

Մեթոդաբանությունն ընդգրկում է նյութերի ուսումնասիրում (կամերալ ուսումնասիրություն), որակական հարցազրույցներ և ներգաղթողների շրջանակում հարցում: Ուսումնասիրության զեկույցը քննարկվել է ՀՀ պատկան պետական մարմինների և իմիգրացիայի ոլորտում աշխատող հիմնական միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ:

Կուզենայինք շնորհակալություն հայտնել ծրագրի դոնորներին՝ Եվրոպական Միությանը, ՄՄԿ-ի զարգացման հիմնադրամին՝ միգրացիայի կառավարման ոլորտում տեխնիկական աջակցության հնարավորության և սույն հետազոտության անցկացումն ու դրա զեկույցի հրատարակումը ֆինանսավորելու համար:

Կցանկանայինք երախտագիտություն հայտնել արդյունավետ աշխատանքի համար զեկույցի հեղինակ Վահե Մամբրեյանին, ծրագրի ղեկավար Քրիստինա Գալստյանին, ՄՄԿ-ի Հարավ-արևելյան և Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի համար տարածաշրջանային գրասենյակի աշխատակիցներին (մասնավորապես Կատարինա Լուգոֆերին), ովքեր իրենց ներդրումն են ունեցել հետազոտության գործընթացում:

Հնարավոր չէր լինի արդյունավետ կատարել այս ուսումնասիրությունն առանց Հայաստանի Կառավարության արժեքավոր աջակցության. Այս առումով երախտապարտ ենք ՀՀ ոստիկանությանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը, ՀՀ պետական միգրացիոն ծառայությանը, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ սփյուռքի նախարարությանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնա-

կատարի Երևանյան գրասենյակին՝ իրենց արժեքավոր առաջարկությունների համար: Շնորհակալ ենք նաև Մարդկային զարգացման միջազգային կենտրոնից, Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնից և ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակից՝ տրամադրված տեղեկատվության համար:

ՄՄԿ-ը համոզված է, որ հետազոտության հիմնական եզրակացություններն օգտակար կլինեն Հայաստանում իմիգրացիայի ու վերադարձի կառավարման, միգրանտների ինտեգրման քաղաքականության մշակման գործընթացում:



Իլոնա Տեր-Մինասյան

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության գրասենյակի ղեկավար

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում անկանոն միգրացիայի վերաբերյալ ելակետային հետազոտությունն իրականացվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից իրականացվող «Աջակցություն՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների ստեղծմանը» տարածաշրջանային ծրագրի իրականացմանը նպաստելու համար: Ծրագրի **ընդհանուր նպատակը** Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների ստեղծմանը և զարգացմանը նպաստելն է:¹ Ծրագիրն ունի **չորս կոնկրետ նպատակ** (դրանցից երեքն ուղղված են Հայաստանին՝

1. աջակցել Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման դեպքերի արդյունավետ կառավարման համակարգերի ստեղծմանը.
2. զարգացնել Հայաստանում և Ադրբեջանում միգրանտներին կացարանով ապահովման կենտրոնների կառավարման համար անհրաժեշտ կարողությունները.
3. աջակցել վերադարձած միգրանտներին հասարակության մեջ վերաինտեգրելու ինստիտուցիոնալ արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը Հայաստանում և Ադրբեջանում.
4. բարելավել Վրաստանում կամավոր վերադարձի կառավարման քաղաքականությունը՝ հետ ընդունված երրորդ երկրի քաղաքացիների և անկանոն կարգավիճակով տարանցիկ միգրանտների համար:

Ծրագրով նախատեսված գործողությունները սահմանվել են ըստ հետևյալ չորս թեմատիկ խմբերի, որոնցից չորրորդն ուղղված է Վրաստանին՝

- 1-ին թեմատիկ խումբ. Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում արդյունավետ հետընդունման ու գիտելիքների փոխանակման համար անհրաժեշտ կարողությունների զարգացում.
- 2-րդ թեմատիկ խումբ. Հայաստանում և Ադրբեջանում միգրանտին կացարանով ապահովելու կենտրոնների կառավարման համար անհրաժեշտ կարողությունների ստեղծում.
- 3-րդ թեմատիկ խումբ. Դեպի Հայաստան և Ադրբեջան կատարվող՝ աջակցվող կամավոր վերադարձի և Հայաստանում ու Ադրբեջանում վերաինտեգրման ծրագրերի իրականացման նպատակով ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծում.
- 4-րդ թեմատիկ խումբ. Վրաստանից անկանոն միգրացիոն հոսքերը և կամավոր վերադարձը կառավարելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծում:

1 1.1 գլխի հետևյալ մասը հանդիսանում է ՄՄԿ-ի կողմից ներկայացված՝ Ծրագրի համառոտ նկարագրությունից հղում

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիան ուսումնասիրելը և գնահատելն է: Հետազոտությամբ պետք է անդրադառնալ այն հարցին, թե ինչպես է դեպի Հայաստան կատարվող անկանոն միգրացիան առնչվում «Առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրին (այսուհետ՝ Հետընդունման համաձայնագիր)՝ երրորդ երկրի քաղաքացիներին հավանական հետընդունման առումով: Հետընդունման համաձայնագիրը կնքվել է 2013 թվականի ապրիլի 19-ին և վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2013 թվականի նոյեմբերի 11-ին:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են հետևյալ առանձին հարցերը.

1. Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն իրավիճակը,
2. Հայաստանի Հանրապետությունում միգրացիան կարգավորող իրավական դաշտի ուսումնասիրությունը,
3. Հայաստանի Հանրապետությունում միգրացիան կարգավորող ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրությունը,
4. Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի վերաբերյալ քանակական տվյալների (վիճակագրության) հավաքագրումը և դրանց վերլուծությունը
5. Հայաստանի Հանրապետությունում բնակվող անկանոն կարգավիճակով միգրանտների որակական ուսումնասիրությունը:

1.3 ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Հետազոտությունն իրականացնելու համար պատրաստվել և կիրառվել են մի շարք մեթոդաբանական գործիքներ: Մեթոդաբանորեն հետազոտությունը բաժանվել է հետևյալ բաղադրիչների՝

- Ա. Օժանդակ նյութերի **կամերալ ուսումնասիրություն**, որը ներառում է ա) Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում կատարված հետազոտությունների համապատասխան զեկույցների ուսումնասիրությունը, բ) հարակից օրենսդրության՝ օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի վերլուծությունը և գ) Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կարգավորման գործընթացում ներգրավված համապատասխան գերատեսչությունների կայքէջերի (ինչպես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության Միգրացիայի պետական ծառայությունը (այսուհետ՝ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ և այլն)) ուսումնասիրությունը:
- Բ. Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն հիմնախնդիրներում ներգրավված փորձագետների շրջանում **որակական հարցազրույցներ**: Այդպիսի հարցազրույցներ անցկացնելու համար մշակվել է հարցման հատուկ գործիք, որը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. ա) Հայաստանի Հանրապետությունում միգրացիան կարգավորող իրավական դաշտը, բ) միգրացիան կարգավորող ինստիտուցիոնալ դաշտը և գ) դեպի Հայաստանի Հանրապետություն կատարվող անկանոն միգրացիայի քանակական

ցուցանիշները: Հարցազրույցները Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, արտաքին գործերի նախարարության, տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների տարբեր բաժինների փորձագետների հետ անցկացվել են առերես ձևաչափով:

Գ. **Անկանոն կարգավիճակով միգրանտների** և ապաստան հայցողների կամ կացության թույլտվության համար դիմած անձանց հարցումներ: Նշված հարցազրույցներն անցկացնելու համար մշակվել է հարցման հատուկ գործիք, որը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝ ա) հարցվողների բնութագիրը, բ) հարցվողների սոցիալ-տնտեսական վիճակը, գ) միգրացիոն հիմնախնդիրները, դ) Հայաստանի Հանրապետությանը կամ անկանոն կարգավիճակով միգրանտների և այլ անձանց կողմից թիրախ հանդիսացող՝ վերջնական նպատակակետ երկրին վերաբերող հիմնախնդիրները, ե) իրավունքների և կարիքների մասին իրազեկվածությունը: Հարցվողների պատասխանները չեն ենթարկվել վիճակագրական վերլուծության, քանի որ քիչ թվով հարցազրույցներ են անցկացվել: Նրանց պատասխանները վերլուծվել են ավելի շատ որակական տեսանկյունից, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում անկանոն կարգավիճակով միգրանտների հետ կապված տարբեր հայեցակետերի վերաբերյալ արվել են կարևոր եզրակացություններ:

Սույն զեկույցի մեջ ամփոփված են նշված մեթոդաբանական և վերլուծական գործիքների կիրառման արդյունքում ստացված բոլոր արդյունքները:

2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱԲԿ

1991 թվականին Հայաստանի անկախացումից ի վեր, և նույնիսկ ավելի վաղ, միգրացիայի երևույթը միշտ եղել է հայ իրականության անբաժանելի մասը: Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի երևույթի վերջին տարիների պատմությունը կարելի է պայմանականորեն և ժամանակագրական կարգով բաժանել հետևյալ փուլերի՝

- 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո աղետի գոտուց մեծ թվով մարդիկ գաղթեցին այլ երկրներ, թեև միգրացիայի ծավալները երկրի ներսում ավելի մեծ չափերի էին հասնում:
- 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին տեղի ունեցավ Ադրբեյջանից հայ փախստականների զանգվածային ներհոսք, որին, քաղաքական բախումների հետևանքով, հետևեց Հայաստանում բնակվող ադրբեյջանցիների միգրացիան:
- 1991-1994 թվականներին տեղի ունեցավ Հայաստանի բնակչության զանգվածային արտագաղթ՝ նույն քաղաքական բախման և դրանից բխող սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառով, ինչպիսիք էին եկամուտ հայթայթելու հնարավորությունների բացակայությունը, գոյության անբավարար միջոցները, կոմունալ և հանրային ծառայությունների բացակայությունը:
- Մինչև 2000-ականների վերջը հայերը ցածր ինտենսիվությամբ, սակայն շարունակական փոքր ծավալներով (յուրաքանչյուր տարի մոտավորապես 6,000-7,000 մարդ) արտագաղթում էին հիմնականում եվրոպական երկրներ: 2008 թվականի քաղաքական լարվածությունից հետո կարելի էր նկատել արտագաղթի որոշ ակտիվացում, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում, որով էլ պայմանավորված էր բավականին մեծ թվով որակավորված մասնագետների և գործարարների արտահոսքը:
- Մինչ այժմ նկատվում է հիմնականում դեպի Ռուսաստան կատարվող, բավականին կայուն, շարունակական մեծ ծավալներ ունեցող աշխատանքային միգրացիան: Այդ աշխատանքային միգրացիան հանգեցնում է դեպի Հայաստան կատարվող զգալի չափերով դրամական փոխանցումներին և կապիտալի ներհոսքին՝ այնուամենայնիվ, երկրում առաջացնելով լուրջ սոցիալական, ժողովրդագրական և ընտանեկան խնդիրներ:
- Իրաքում և հատկապես Սիրիայում ստեղծված քաղաքական անկայունության ու պատերազմների հետևանքով այդ երկրներից տեղի է ունեցել ազգությամբ հայերի զգալի չափերով ներգաղթ:

Միգրացիոն խոշորածավալ հոսքերը կարող են ժողովրդագրական փոփոխությունների, պետական կառավարման և կարգավորման, սոցիալական ճնշման, հանցավորության վիճակի վատթարացման և բազմաթիվ այլ հարցերի դիտանկյունից դառնալ մեկ այլ խնդրահարույց հարց: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հստակորեն տարանջատել արտագաղթի և ներգաղթի հետևանքով առաջացած խնդիրները: Անկախացումից ի վեր՝ Հայաստանի Հանրապետության առջև ծառայել էին էական խնդիրներ՝ կապված միայն արտագաղթի հետ, այսինքն՝ այն մի շարք միգրանտների համար կարծես դարձել էր ելքի երկիր, որոնք արտասահմանում փնտրում էին գոյության ավելի լավ միջոցներ և եկամուտ հայթայթելու ավել-

լի մեծ հնարավորություններ: Նրանց շրջանում անկանոն կարգավիճակով միգրանտներ շատ են եղել, և այժմ էլ նրանց թիվը դեռևս մեծ է, և դա, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ վերջնական նպատակակետ հանդիսացող երկրների համար որոշակի խնդիրներ է ստեղծում:

Վերջին աշխարհաքաղաքական զարգացումները և միջազգային համագործակցության շարունակական խորացումը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունն ամբողջությամբ ապահովագրված չէ օտարերկրացիների հնարավոր խոշորածավալ ներհոսքից և հնարավոր ռիսկերը (և նույնիսկ վտանգները) պատշաճ կառավարելու համար անհրաժեշտ է մշակել միգրացիան կարգավորելու օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործնական գործիքներ:

2.2 ՆԵՐԳԱՂԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես նշվեց, մինչ այժմ ներգաղթը Հայաստանի համար խոշոր խնդրահարույց հարց չի եղել: Այնուամենայնիվ, խնդիրն առկա է, թեև ունի հայերի առանձնահատկություններով պայմանավորված բավականին առանձնահատուկ բնույթ, ինչին անդրադարձ չի կատարվել սույն զեկույցում: Քննարկվող առարկայի հետագա գնահատումը պայմանականորեն բաժանվել է երկու բաժնի՝ ազգությամբ հայերի (որոնք պետության կողմից արժանանում են արտոնյալ վերաբերմունքի) և օտարերկրացիների ներգաղթը:

2.2.1 ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ

Հայաստանի Հանրապետությունն աշխարհի շատ երկրներում ունի 10 միլիոնանոց սփյուռք: Հայաստանի Հանրապետությունը միլիոնավոր հայերի համար մնում է իրենց հայրենի երկիրը, որը, հարկ եղած դեպքում, համարվում է միգրացիայի հնարավոր վերջնական նպատակակետ երկիրը: Այս պնդումը ճիշտ է՝ հաշվի առնելով նույնիսկ ներկա սոցիալ-տնտեսական վատ վիճակը և քաղաքական դաշտում բարելավումներ ունենալու ակնկալիքները: Նշվածի լավագույն ապացույցը 1980-ականների վերջին Ադրբեջանից հայ փախստականների և 2010-ականների սկզբին սիրիահայերի ներգաղթն է: Երկու դեպքում էլ քաղաքական անկայունությունը և պատերազմն ստիպեցին մի շարք ազգությամբ հայերի գաղթել Հայաստանի Հանրապետություն՝ ժամանակավոր կամ մշտական բնակության նպատակով:

Միևնույն ժամանակ, վերջին զարգացումներն արդեն ցույց տվեցին, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է բարելավի մեծ թվով միգրանտներ ընդունելու իր հնարավորությունները՝ միգրանտներին առաջին անհրաժեշտության իրերով, կացարանով կամ այլ հարմարություններով ապահովելու, միգրանտների վերականգնումն ու (տնտեսական) ինտեգրումն իրականացնելու առնչությամբ և այլն: Ավելին, Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակն ստիպում է որոշ ներգաղթածների վերադառնալ իրենց ծագման երկրներ կամ Հայաստանից կրկին գաղթել այլ երկրներ, օրինակ՝ եվրոպական պետություններ:

Ազգությամբ հայերի համար միգրացիոն ընթացակարգերը հնարավորինս ազատականացվել են: Անկանոն միգրացիայի դիտանկյունից՝ նշված միգրանտները գրեթե վտանգ չեն ներկայացնում: Հայաստանի Հանրապետություն նրանց մուտքը և գտնվելն օրինականացնելը շատ հեշտ է և շատ մեծ ջանքեր չի պահանջում:

2.2.2 ԱՅԼ ԱԶԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳԱՂԹԸ

Այլ ազգություն ունեցող անձանց ներգաղթը բավականին հազվադեպ երևույթ է Հայաստանի Հանրապետությունում, ինչը չափվում է ներգաղթող անձանց փոքր թվով՝ չնայած եզակի և կարճաժամկետ հիմքով ներգաղթելու բացառություններին: Այնուամենայնիվ, հիմնվելով երկրում միգրացիայի կարգավորման հարցերով փորձագետների հետ անցկացված հարցազրույցների վրա, նշված ներգաղթողներին (նրանց թիվը մեծ չէ) կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ աշխատանքային միգրանտներ և միգրանտներ, որոնք փորձում են Հայաստանի Հանրապետությունն օգտագործել որպես տարանցման տարածք՝ իրենց վերջնական նպատակակետ երկիր հասնելու համար:

Անկանոն միգրացիայի հետ կապված ռիսկերի դիտանկյունից առավել մեծ ուշադրության է արժանի հիմնականում միգրանտների երկրորդ խումբը: Քիչ թվով անկանոն կարգավիճակով միգրանտներ, որոնք հիմնականում գալիս են աֆրիկյան և ասիական երկրներից, փորձում են ցանկացած տեսակի կացության կարգավիճակ ստանալու համար օգտվել Հայաստանի Հանրապետությունում գործող միգրացիայի բավականին ազատական կարգավորումներից, իսկ նրանց վերջնական նպատակն ավելի լավ սոցիալ-տնտեսական վիճակ ունեցող այլ երկրներ՝ ինչպես օրինակ՝ եվրոպական պետություններ և Հյուսիսային Ամերիկա գաղթելն է:

Միննույն ժամանակ ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունները շատ լավ գիտակցում են միգրացիայի ազատական կարգավորման և վիզային ռեժիմի ազատականացմանը նպաստող հնարավորությունների պոտենցիալ ռիսկերը: Տվյալ խնդիրը լավ ըմբռնելու հանգամանքը համապատասխան մարմիններին ստիպում է գործել չափազանց ընտրողաբար՝ անկանոն կարգավիճակով միգրանտներին ցանկացած տեսակի բնակության թույլտվություն և այլ կարգավիճակ տալու վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Դա հաստատում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումները՝ հետընդունման մասին կնքված համաձայնագրերի լուսի ներքո, որին անդրադարձ կկատարվի հաջորդ գլխում:

2.3 ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ

2013 թվականի ապրիլին և նոյեմբերին Հայաստանը համապատասխանաբար կնքել ու վավերացրել է «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիրը: Մինչ այդ Հայաստանի Հանրապետությունն եվրոպական 12 պետությունների և Ռուսաստանի Դաշնության հետ կնքել էր հետընդունման համաձայնագրեր:

Հետընդունման համաձայնագրի կնքման գործընթացն սկսվել էր դեռևս 2000-ականների սկզբին, և Հայաստանն ի սկզբանե նշված խնդրի նկատմամբ ցուցաբերում էր փոքր-ինչ տարբեր և նախազգուշական մոտեցում: Արտասահմանում ունենալով տասնյակ հազարավոր ազգությամբ հայեր, անկանոն կարգավիճակով միգրանտներ՝ անհրաժեշտություն էր առաջանում մտածելու այն մեծ թվով մարդկանց հնարավոր հետընդունման մասին, որոնք կարող էին երկ-

րում չնախատեսված սոցիալական լարվածություն և դժվարություններ առաջացնել: Իրավիճակի հետագա գնահատումը ցույց տվեց, որ անկանոն կարգավիճակով միգրանտների հնարավոր վտարումը կարող էր տեղի ունենալ (և տեղի էր ունենում)՝ անկախ նշված համաձայնագրերի կնքված լինելու հանգամանքից: Ճիշտ հակառակը՝ հետընդունման համաձայնագրերի կնքումը թույլ տվեց օտարերկրյա պետությունների հետ առավել խորը համագործակցություն ծավալել, այդ թվում՝ օրինականացնել հարաբերությունները և հստակեցնել բոլոր կողմերի, այդ թվում՝ անկանոն կարգավիճակով միգրանտների իրավունքներն ու պարտականությունները: Վերջապես, հետընդունման համաձայնագրերի կնքումը նպաստեց միգրացիայի կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության համապատասխան ռազմավարական նպատակների իրագործմանը:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

3.1 ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՍՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՄՄԿ-ն անկանոն միգրացիան սահմանում է որպես տեղաշարժ, որը տեղի է ունենում ուղարկող, տարանցման և ընդունող երկրների նորմատիվ իրավական դրույթների գործողությունից դուրս: Ուղարկող երկրի դիտանկյունից՝ անկանոն բնույթն ակներև է այն դեպքերում, երբ, օրինակ, անձը հատում է որևէ միջազգային սահման առանց վավեր անձնագրի կամ ճամփորդական փաստաթղթի կամ չի կատարում երկրից դուրս գալու համար սահմանված վարչական պահանջները²: **Նպատակակետ երկրների դիտանկյունից՝ դա երկիր մուտք գործելը, մնալը կամ աշխատելն է առանց անհրաժեշտ թույլտվության կամ ներգաղթային կանոնակարգերով պահանջվող փաստաթղթերի³:**

Իրավական համատեքստում «անկանոն միգրացիա» եզրույթը սովորաբար փոխարինվում է «անօրինական միգրացիա» եզրույթով: Այնուամենայնիվ, միտում կա «անօրինական միգրացիա» եզրույթի գործածությունը սահմանափակելու միգրանտների՝ մաքսանենգ ճանապարհով տեղափոխման և մարդկանց թրաֆիքինգի դեպքերով: Ուստի, սույն հետազոտության համատեքստում անօրինական կարգավիճակով միգրանտը նպատակակետ երկրի դիտանկյունից (տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունը) օտարերկրյա պետությունից այն անձն է, որը՝

- երկիր է մուտք գործել (հատել է երկրի պետական սահմանը) առանց վիզայի կամ թույլտվության,
- երկիր է մուտք գործել կամ գտնվել է այնտեղ կեղծ փաստաթղթերով,
- երկիր է մուտք գործել վիզայով և (կամ) այլ անհրաժեշտ փաստաթղթերով, սակայն.
 - երկրում գտնվել է վիզայով թույլատրված ժամկետից ավելի երկար ժամանակով,
 - աշխատանքային միգրանտը չի երկարացրել իր աշխատանքի թույլտվությունը,
 - ապաստան հայցողը շարունակում է գտնվել երկրում համապատասխան մերժում ստանալուց հետո,
 - երկրում գտնվել է վիզայում նշված նպատակից տարբեր այլ նպատակով (ինչպես օրինակ՝ մուտք է գործել երկիր որպես զբոսաշրջիկ, սակայն աշխատանքի է ընդունվել):

Հայաստանի Հանրապետությունում անկանոն կարգավիճակով միգրանտների նկատմամբ ներկայացվում են վարչական հայցապահանջներ, սակայն տարբեր իրավական հետևանքներով: Այն զբոսաշրջիկները, որոնք գտնվել են Հայաստանի Հանրապետությունում թույլատրված ժամկետից ավելի երկար ժամանակով (հիմնականում վիզայի ժամկետի մասին մոռանալու պատճառով և կարճ

2 Տե՛ս <http://www.iom.int/cms/en/sites/iom/home/about-migration/key-migration-terms-1.html#irregular-migrant>

3 «Անկանոն կարգավիճակով միգրանտներ» սահմանումը, որոշ վերապահումներով, վերաբերում է նաև այսպես կոչված «կանաչ սահմանի» հատման դեպքերին, թեև նման դեպքերն ավելի շատ վերաբերում են անօրինական, քան անկանոն միգրացիային:

ժամանակով), պետք է պետական սահմանին վճարեն վարչական տույժ և լքեն երկիրը: Առանց անհրաժեշտ փաստաթղթերի կամ կեղծ փաստաթղթերով երկիր մուտք գործած՝ անկանոն կարգավիճակով միգրանտների նկատմամբ հարուցվում է քրեական գործ: Մյուսները կարող են պարզապես վտարվել երկրից, և նրանց մուտքը տվյալ երկիր կարող է արգելվել:

Նախորդ պարբերությամբ վեր հանվեցին այն հիմնական պատճառները, թե ինչու են անկանոն կարգավիճակով միգրանտներն անում ամեն ինչ, որպեսզի խուսափեն երկրի պետական գերատեսչություններում և այլ մարմիններում հարցաքննություններից: Հաշվի առնելով երկրում նման անկանոն կարգավիճակով միգրանտների փոքր թիվը՝ նրանց բացահայտելը բավականին բարդ է: Ավելին, նշված անձինք (կամ երկրում նրանց գործատուները, ընկերները և բարեկամները) պատրաստ չեն որևէ հաղորդակցության, նույնիսկ բարի նպատակներից ելնելով միասնական հարցումների մասնակցելու համար: Նրանք վախենում են համապատասխան մարմինների կողմից բացահայտվելուց, իրենց դեմ հայցապահանջ ներկայացվելուց և երկրից վտարվելուց:

Մյուս կողմից, որևէ կանոնակարգ չխախտելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելը բավականին հեշտ է, քանի դեռ միգրանտը չի զբաղվում որևէ անօրինական գործունեությամբ: Ազգությամբ հայ օտարերկրացիների համար այն ավելի հեշտ է, քանի որ պահանջվում են ավելի քիչ փաստաթղթեր, որոշումները կայացվում են ավելի կարճ ժամկետում և հիմնականում բերում դրական արդյունքների, վճարների չափը հասցված է նվազագույնի կամ դրանք ընդհանրապես հանված են և այլն: Ուստի, միգրանտները, ունենալով Հայաստանի Հանրապետությունում գտնվելու իրավական նպատակներ, պարզապես կարիք չունեն դառնալու անկանոն կարգավիճակով միգրանտներ: Հաջորդ գլուխներում կներկայացվի Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն հարցերը կարգավորող հիմնական օրենսդրական դաշտը:

3.2 ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում միգրացիայի կառավարման վերաբերյալ օրենսդրական դաշտի զարգացումը խթանվել է հիմնականում 2000-ականների կեսերին, թեև գործընթացն սկսվել է 1991 թվականին անկախության հռչակումից անմիջապես հետո: Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի հիմնախնդիրները կարգավորող օրենսդրական դաշտը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ երեք մակարդակների՝ 1) միջազգային կոնվենցիաներ, որոնց Հայաստանի Հանրապետությունը միացել է և տարբեր կողմերի հետ ստորագրված համաձայնագրեր, 2) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներ, 3) ենթաօրենսդրական ակտեր (Կառավարության հրամանագրեր, հայեցակարգեր, տարբեր մարմինների կողմից ընդունված հրամաններ և այլն), որոնք կարգավորում են միգրացիան տակտիկական և օպերատիվ մակարդակներում: Հաջորդ գլուխներում կներկայացվեն միայն նշված երեք մակարդակներում գործող հիմնական իրավական փաստաթղթերը:

3.2.1 ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև միջազգային օրենսդրական դաշտի մշակումը մեծ ջանքեր և ժամանակ է պահանջել: Հայաստանը միացել է մի շարք միջազգային կոնվենցիաների, մի շարք երկրների հետ կնքել է երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հիմնական միջազգային իրավական ակտերից միայն մի քանիսը:

N	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Կոնվենցիան (համաձայնագիրը)	Բովանդակությունը
1.	1993 թվական	«Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» ՄԱԿ-ի կոնվենցիա (1951 թվական)	Հայաստանն ստանձնել է փախստականներին ընդունելու, ապաստան տալու, նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու պարտավորություն՝ բացառելով ռասայի, կրոնի կամ ծագման երկրի հիմքով ցանկացած խտրականություն, ինչպես նաև՝ նրանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ համահավասար վերաբերմունք ցուցաբերելու, նրանց տեղաշարժի ազատությունն ապահովելու և այլ պարտավորություններ:
2.	1994 թվական	«Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Նյու Յորք, 1954 թվական) «Ապաքաղաքացիության կրճատման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Նյու Յորք, 1961 թվական)	Հայաստանն ստանձնել է ապաքաղաքացիության դեմ պայքարելու, քաղաքացիություն չունեցող անձանց ինտեգրումը և նրանց կացության կարգավիճակ տրամադրելու ընթացակարգերը դյուրացնելու պարտավորություն:
3.	1996 թվական	«Աշխատանքային միգրացիայի և միգրանտ աշխատողների սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» ԱՊՀ համաձայնագիր	
4.	1999 թվական	«Ապօրինի միգրացիայի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» ԱՊՀ համաձայնագիր	
5.	2003 թվական	«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, խափանման և պատժի մասին» արձանագրություն «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների՝ մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» արձանագրություն	
6.	2006-2007 թվականներ	«Զբաղվածության համար միգրացիայի մասին» ԱՄԿ-ի թիվ C-97 կոնվենցիա (1949 թվական) «Միգրանտ աշխատողների մասին» ԱՄԿ-ի թիվ 143 կոնվենցիա (1975 թվական)	Հայաստանն ստանձնել է խտրականության բացառմամբ միգրանտ աշխատողների՝ մարդու իրավունքները հարգելու, հավասար հնարավորություններ ապահովելու, միգրանտ աշխատողներին վերաբերող տարբեր հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու, անօրինական և ստվերային զբաղվածության դեմ պայքարելու, միգրանտ աշխատողների ազատ տեղաշարժը խթանելու և այլ պարտավորություններ:
7.	2007 թվական	ՀՀ և ԵՄ համատեղ գործողությունների ծրագիր	Հայաստանն ստանձնել է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի պարտավորություն՝ ապահովելով գենդերային հավասարություն, ինչպես նաև՝ մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքները պաշտպանելու, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի շուրջ համագործակցությունը խթանելու պարտավորություն:

8.	2008 թվական	«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա	Հայաստանն ստանձնել է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի պարտավորություն՝ ապահովելով գենդերային հավասարություն, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքները պաշտպանելու, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի շուրջ համագործակցությունը խթանելու պարտավորություն:
9.	2003 - 2011 թվականներ	Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության 12 պետությունների միջև կնքված հետընդունման համաձայնագրեր	Համաձայնագրերով կարգավորվում էին անկանոն միգրացիայի և հետընդունման հարցերի վերաբերյալ Հայաստանի և Եվրոպական միության 12 պետությունների միջև հարաբերությունները:
10.	2011 թվական	Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված հետընդունման համաձայնագրեր	Այլ պայմանագրերի կիրառման դեպքում(...) պայմանագրերի համաձայն հետ են ընդունվում բոլոր այն անձինք, որոնք չեն կատարում կամ այլևս չեն կատարում հայցող կողմի պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար գործող պայմանները՝ պայմանով, որ ապացուցվում է կամ տրամադրված առերևույթ ապացույցների հիման վրա կարելի է իրավաչափորեն ենթադրել, որ նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են:
11.	2011 թվական	«Անօրինական միգրացիայի դեմ պայքարում համագործակցության մասին» Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության միգրացիոն դաշնային ծառայության միջև կնքված համաձայնագիր	
12.	2013 թվական	«Առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագիր	Այլ պայմանագրերի կիրառման դեպքում (...) պայմանագրերի համաձայն հետ են ընդունվում բոլոր այն անձինք, որոնք չեն կատարում կամ այլևս չեն կատարում հայցող կողմի պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար գործող պայմանները՝ պայմանով, որ ապացուցվում է կամ տրամադրված առերևույթ ապացույցների հիման վրա կարելի է իրավաչափորեն ենթադրել, որ նրանք պայմանագրի կողմ հանդիսացող երկրների քաղաքացիներ կամ երրորդ երկրների քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձինք են, որոնք բավարարում են Համաձայնագրով սահմանված որոշ պայմաններ:

3.2.2 ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Տեղական օրենսդրական դաշտի զարգացումը մեկ այլ մարտահրավեր էր Հայաստանի Հանրապետության համար, ինչն անհրաժեշտ էր հաղթահարել՝ երկրում միգրացիան արդյունավետ կարգավորելու նպատակով: Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է տվյալ հարցի կարգավորման համար հետևի իր սահմանած գերակայություններին, մյուս կողմից՝ օրենսդրությունը պետք է համապատասխանի միգրացիայի կարգավորման ոլորտում միջազգային կոնվենցիաներին միանալու արդյունքում ստանձնած և կնքված միջազգային համաձայնագրերով սահմանված պարտականություններին:

Միգրացիայի կարգավորման առնչությամբ խաչաձև հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներով: Ստորև ներկայացված են միայն միգրացիայի կառավարման տարբեր խնդիրներին առնչվող հիմնական օրենքները:

N	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Իրավական ակտը	Ակնարկ՝ անկանոն միգրացիայի բովանդակության վերաբերյալ
1	1986 թվական	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք	<p>Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են վարչական պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ընդհանուր հիմունքներով: (...)</p> <p>Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվելը (գտնվելը), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցելն առանց վիզայի կամ կացության համապատասխան կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով, հանգեցնում է տուգանքի վճարման՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով (...):</p> <p>Առանց համապատասխան կացության կարգավիճակի կամ աշխատանքի թույլտվության՝ օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքի ընդունելն հանգեցնում է տուգանքի վճարման՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով (...):</p> <p>Պետական սահմանի ռեժիմը, սահմանային ռեժիմը և ՀՀ պետական սահմանի անցման կետերի ռեժիմը խախտող անձինք կարող են ձերբակալվել մինչև 3 ժամ տևողությամբ՝ արձանագրություն կազմելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անձը և իրավախախտման հանգամանքները պարզելու համար՝ մինչև 3 օր ժամանակով: (...)</p>
2	1995 թվական	«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք	<p>Այն կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը: Յուրաքանչյուր անձ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք (...): Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:</p> <p>Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է քաղաքացիություն չունեցող անձանց ձեռք բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և չի խոչընդոտում նրանց կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը:</p> <p>18 տարին լրացած (...) ցանկացած անձ քաղաքացիություն ձեռք բերելու համար իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետություն, եթե նա օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, տիրապետում է հայերենին և ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:</p>

3	2001 թվական	«Սահմանապահ զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք	<p>Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերն իրավասու են (...) ստուգելու անձանց և տրանսպորտային միջոցների փաստաթղթերը, իրականացնելու տրանսպորտային միջոցների և դրանցով տեղափոխվող բեռների (...) զննություն.</p> <p>իրականացնել պետական սահմանի ռեժիմը, վարչական ձերբակալման ենթարկել պետական սահմանի ռեժիմը, սահմանային ռեժիմն ու պետական սահմանի անցման կետերի ռեժիմը (...) խախտած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց.</p> <p>զննության ենթարկել և, անհրաժեշտության դեպքում, վերցնել ձերբակալվածների մոտ եղած իրերն ու փաստաթղթերը: Վարչական ձերբակալման և ձերբակալվածների իրերը վերցնելու յուրաքանչյուր դեպքի համար կազմվում է արձանագրություն և իրականացվում է ձերբակալվածի մոտ եղած իրերի առգրավում:</p> <p>վարչական ձերբակալման ենթարկված կամ հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալված անձանց, իրավասու մարմինների քննությանը ենթակա այլ անձանց պահել սահմանապահ զորքերի հատուկ սարքավորված շինություններում: Անհրաժեշտության դեպքում այդ անձինք կարող են ազգային անվտանգության և ոստիկանության մարմինների ժամանակավոր պահման մեկուսարաններում.</p> <p>պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերում կատարել համապատասխան նշումներ, իսկ, անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավորապես վերցնել դրանք, ինչպես նաև վերցնել կեղծ փաստաթղթերը, թույլ չտալ պետական սահմանով անցնել ՀՀ տարածք՝ մուտքի կամ ՀՀ տարածքից ելքի իրավունք տվող փաստաթղթերի պատշաճ ձևակերպումը կամ մինչև նրանց կողմից փաստաթղթերը կորցնելու հանգամանքների պարզաբանումը.</p>
4	2002 թվական	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք	<p>Սույն օրենքի նպատակը բնակչի ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու և բնակչի՝ իր բնակության վայրում գրանցվելու (հաշվառվելու) իրավունքի իրացումն է: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը և (կամ) օտարերկրյա պետության քաղաքացիությունը և Հայաստանի Հանրապետությունում բնակության թույլտվության առկայությունը հավաստող անձնական տվյալները (փաստաթղթի տեսակը, համարը, տրման ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը) պետք է մշակվեն բնակչության պետական ռեգիստրում:</p>

5	2003 թվական	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք	<p>Թրաֆիքինգ. Սեռական շահագործման կամ հարկադիր աշխատանքի նպատակով մարդկանց հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ սպառնալիք կամ բռնություն գործադրելով, խարդախությամբ, անձի կախյալ վիճակն օգտագործելու կամ շանտաժի միջոցով, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, եթե դա կատարվել է շահադիտական դրդումներով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչև մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մինչև երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:</p> <p>Պռնկությամբ զբաղվելուն ներգրավելը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, անձի կախյալ վիճակն օգտագործելու, գույքը ոչնչացնելու, հափշտակելու կամ վնասելու սպառնալիքով կամ անձին կամ նրա մերձավորին արատավորող տեղեկություններ տարածելու սպառնալիքով կամ խաբեությամբ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչև մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով:</p> <p><i>Պեղական սահմանն ապօրինի հատելը</i> Առանց համապատասխան փաստաթղթերի կամ թույլտվության Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մինչև երեք տարի ժամկետով: 2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կամ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով: 3. Սույն հոդվածը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ օգտվելու համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված՝ քաղաքական ապաստանի իրավունքից:</p>
---	-------------	--	---

<p>6</p>	<p>2006 թվական</p>	<p>«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք</p>	<p>Այն կարգավորվում է օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու, Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցելու, Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու, ինչպես նաև օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերություններ: «Օտարերկրացիներ» հասկացության մեջ ներառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք): Առանց անձնագրի, դրան փոխարինող փաստաթղթի կամ անվավեր անձնագրով Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետ ժամանած կամ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացիների մուտքը չի թույլատրվում Հայաստանի Հանրապետության տարածք: Հնարավորության դեպքում, նրանք անմիջապես վերադարձվում են իրենց ծագման երկիր կամ այն պետություն, որտեղից ժամանել են (...)' բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք ժամանել են փախստականի կարգավիճակ կամ քաղաքական ապաստանի իրավունք հայցելու նպատակով:</p> <p>Այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է առանց մուտքի վիզայի Հայաստանի Հանրապետություն ժամանելու ռեժիմ, Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում (...):</p> <p>Օտարերկրացուն տրամադրված վիզան ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա աշխատանքի է անցնում Հայաստանի Հանրապետությունում առանց աշխատանքի թույլտվության: Հայաստանի Հանրապետության մուտքի վիզաները տրվում են Հայաստանի Հանրապետությունում մինչև 120 օր գտնվելու ժամկետով՝ առավելագույնը 60 օր ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ (...): Օտարերկրացուն մուտքի վիզայի ժամկետի երկարաձգումը կարող է մերժվել օրենքով սահմանված հիմքերով:</p> <p>Օտարերկրացիները Հայաստանի Հանրապետությունից կարող են դուրս գալ վավեր անձնագրի և մինչև դուրս գալու պահը երկրում նրանց օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավեր փաստաթղթի առկայության դեպքում (...): Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները՝ ա) ժամանակավոր, բ) մշտական և գ) հատուկ: Բնակության կարգավիճակ տրամադրելը (դրա ժամկետը երկարաձգելը) կարող է մերժվել օրենքով սահմանված հիմքերով: Հայաստանի Հանրապետության գործատուներն իրավասու են օտարերկրացի աշխատողի հետ կնքելու աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր) և նրա աշխատանքն օգտագործելու՝ լիազորված մարմնի կողմից տրված աշխատանքի (զբաղվածության) թույլտվության (...) հիման վրա:</p> <p>Աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝ ա) օտարերկրացին աշխատանքի թույլտվությունը ձեռք է բերել խարդախությամբ և բ) օտարերկրացին աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր) չի կնքել աշխատանքի թույլտվություն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կամ այլ աշխատանքի է անցել առանց թույլտվության:</p>
----------	--------------------	---	---

7	2008 թվական	«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք	<p>Այն կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում փախստականի ճանաչման, ապաստանի տրամադրման հարցերին առնչվող հարաբերությունները, ապահովում է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիայի (...) կիրարկումը, ճանաչում է բոլոր օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում և դրա պետական սահմանի վրա ապաստան հայցելու իրավունքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստանի իրավունքի իրականացումը, էթե նրանք բավարարում են սույն օրենքով սահմանված անհրաժեշտ պահանջները:</p> <p>Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի ճանաչվում փախստական, էթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա 1) կատարել է խաղաղության դեմ ուղղված հանցագործություն, պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, (...) 2) կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ նախքան ապաստան հայցելը: 3) մեղավոր է ճանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող արարքների կատարման մեջ:</p> <p>Ապաստանի տրամադրումը կարող է մերժվել ցանկացած փախստականի, որը ժամանել է երրորդ ապահով երկրից, որտեղ նա չունի հետապնդման, մարդու իրավունքների խախտման կամ իր երկիր վերադարձվելու երկյուղ:</p> <p>Փախստականի (...) ճանաչումը չեղյալ է հայտարարվում, էթե պարզվում է, որ անձն ակնհայտորեն չի բավարարում փախստական ճանաչվելու համար նախատեսված պահանջները, որովհետև նոր երևան եկած ապացույցները վկայում են, որ նախկինում արված հայտարարությունները և ներկայացված փաստաթղթերը կեղծ են եղել:</p> <p>Երբ ապաստան հայցողը դիտավորյալ չի համագործակցում (...), ձգձգում է ինքնությունը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի երկարաձգումը կամ չի ենթարկվում (...) տեղաշարժի սահմանափակումներին, ապա նա կարող է պատասխանատվության ենթարկվել:</p> <p>Այն դեպքերում, երբ հաստատվում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականի վերաբերյալ (...) բացառման կամ դադարեցման կամ չեղյալ հայտարարելու հիմքերից որևէ մեկը, Լիազոր մարմինը նախաձեռնում է դադարեցման կամ չեղյալ հայտարարելու ընթացակարգի կիրառումը:</p> <p>Լիազոր մարմինը, համագործակցելով Արտաքին գործերի հարցերով լիազոր մարմնի հետ, ստուգում է դիմողների տրամադրած տեղեկատվությունը և որոշում, էթե արդյոք նրանք բավարարում են օրենքով սահմանված պահանջները: Եթե Լիազոր մարմինը կարծում է, որ պահանջները (...) բավարարված չեն, ապա ընդունում է ապաստանի մասին դիմումը (...) մերժելու վերաբերյալ որոշում:</p>
---	-------------	---	--

3.2.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

Երկրում միգրացիայի արդյունավետ կառավարման առաջին նախապայմանը պատշաճորեն մշակված օրենսդրական դաշտի (միջազգային համաձայնագրեր, կոնվենցիաներ և Հայաստանի Հանրապետության օրենքներ) առկայությունն է: Միևնույն ժամանակ, առանց համապատասխան ենթաօրենսդրական ակտերի (այսինքն՝ նորմատիվ իրավական դաշտի) նշված օրենքները չեն կարող արդյունավետորեն գործել և հնարավոր չի լինի դիմակայել Հայաստանի Հանրապետություն-

Նում միգրացիայի կարգավորման մարտահրավերներին: Առաջնային օրենսդրությունը գործուն և արդյունավետ դարձնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը և առանձին պետական գերատեսչություններ ջանք չեն խնայել համապատասխան նորմատիվ իրավական դաշտը մշակելու և կիրառելու համար: Ստորև ներկայացված են միայն միգրացիայի կարգավորմանը և, հատկապես՝ Հայաստանի Հանրապետությանն ուղղված անկանոն միգրացիայի վերաբերյալ հիմնական նորմատիվ իրավական փաստաթղթերի ցանկը՝

N	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Իրավական ակտը
1	Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին»
2	Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 25-ի թիվ 115-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկում տեղեկություններ մտցնելու և դրանից օգտվելու կարգը սահմանելու մասին»
3	Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին»
4	Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 559-Ն որոշում	«Անօրինական միգրացիայի դեմ պայքարում ԱԴՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի իրականացման գործում իրավասու մարմին նշանակելու մասին»
5	Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի թիվ 872-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ կացարանի գործունեության և ձերբակալված օտարերկրացիների այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին»
6	Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1440-Ն որոշում	«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին»
7	Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 301-Ն որոշում	«Միգրացիայի հարցերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին ճանաչելու մասին»
8	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին»
9	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1360-Ն որոշում	«Օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա պետություններից ստացվող դիմումները ՀՀ պետական մարմինների կողմից քննարկվելու կարգը հաստատելու և (...) մասին»
10	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1593-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»

11	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի թիվ 51 արձանագրային որոշում	«Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման վերաբերյալ հայեցակարգ»
12	Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 28-ի թիվ 823-Ն որոշում	«Այն պետությունների ցանկը հաստատելու մասին, որոնք քաղաքացիները Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ ու հյուպատոսական հիմնարկներ և միայն հրավերի հիման վրա» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի թիվ 329-Ն որոշման հավելվածը լրացնել նոր պարբերությամբ:
13	Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ 783-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին»
14	Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հավելված	Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին»

3.3 ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետություն ժամանող միգրանտների զգալի մասը ազգությամբ հայ օտարերկրացիներ են, որոնք ներգաղթում են Հայաստանի Հանրապետություն տարբեր պատճառներով: Նշված ներգաղթողների հետ կապված խնդիրներին Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից գերակայություն է տրված, և նրանց տրամադրել են որոշ արտոնություններ: Մասնավորապես՝

- «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվում է, որ ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով: Վերջին երեք տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում մշտապես, օրինական ձևով բնակվելուն, հայերենով հաղորդակցվելուն և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը ծանոթ լինելուն ներկայացվող պահանջները պարտադիր չեն ազգությամբ հայերի համար:
- 2012 թվականի հոկտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության ազգային ժողովն ընդունեց ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք⁴: Դրա համաձայն՝ ազգությամբ հայ օտարերկրացիները, որոնք իրենց մշտական բնակության վայրի երկրներում (Լիբանան, Սիրիա) հայտնվել էին քաղաքացու կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող արտակարգ իրավիճակներում, ազատվում են Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակի վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մուտքի վիզայի համար նախատեսված պետական տուրքից:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի

4 Ուժի մեջ է մտել 2012 թվականի նոյեմբերի 24-ին, սկզբնաղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր 2012.11.14/55 (929)

4-ի թիվ 329 որոշման փոփոխության 1.2 հոդվածով (Այն պետությունների ցանկը հաստատելու մասին, որոնց քաղաքացիները, ինչպես նաև ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ և հյուպատոսական հիմնարկներ ու միայն հրավերի հիման վրա) սահմանվում է, որ ծագումով հայ քաղաքացիները Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա կարող են ստանալ նաև Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում⁵:

- Սիրիահայերն օգտվում են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից սահմանված լրացուցիչ արտոնություններից, ինչպես օրինակ՝ նրանք ազատվում են Հայաստանի Հանրապետությունում վիզայով թույլատրված ժամկետից ավելի երկար ժամանակով մնալու դեպքում վճարվող տուգանքներից, նրանք իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում վարելու իրենց ավտոմեքենաներն առանց Հայաստանի Հանրապետությունում դրանք մաքսազերծելու և գրանցելու, նրանց վարորդական իրավունքի վկայականները վավերական են Հայաստանի Հանրապետությունում, նույնիսկ եթե դրանցում առկա չէ հայկական կամ լատինական ձևակերպում:

Ազգությամբ հայերին օրենսդրությամբ և կարգավորիչ իրավական ակտերով տրված արտոնությունները նրանց համար անօգուտ են դարձնում Հայաստանի Հանրապետության տարածքում անկանոն կարգավիճակով միգրանտ դառնալը: Ավելին, ազգությամբ հայ ներգաղթողների համար իրականացվում են մի շարք հատուկ վերահստագրման ծրագրեր: Նշված միջոցառումների իրականացմամբ մեծապես պայմանավորված է երկրում ազգությամբ հայ՝ անկանոն կարգավիճակով միգրանտների թվի կրճատումը:

3.4. ՄԻԳՐԱՑԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնական խնդիրներից մեկը, որը քննարկվել է հետազոտության ընթացքում տարբեր շահառուների հետ, գործող օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի համապատասխանությունն է Հայաստանի Հանրապետության ներկա կարիքներին: Այս հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել օժանդակ նյութերի, այսինքն՝ օրենսդրության (Հայաստանի Հանրապետության օրենքներ, միջազգային համաձայնագրեր և կանոնակարգեր) ու վերլուծական փաստաթղթերի կամերալ ուսումնասիրության ժամանակ: Հետազոտության ընթացքում բացահայտվել են գործող օրենսդրական դաշտի հետևյալ թերությունները և բացերը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության և վերլուծական այլ նյութերի⁶ ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են օրենսդրական դաշտի հետևյալ բացերը, որոնք հաստատվել են նաև իրազեկված շահառուների և տարբեր մարմինների՝ միգրացիայի կարգավորման գործընթացում ներգրավված փորձագետների կողմից: Հարցված փորձագետները, *մասնավորապես*, նշել են Հայաստանի Հանրապետության հետևյալ օրենքները մշակելու և ընդունելու անհրաժեշտությունը՝

5 Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 941-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 1.2 հոդվածում:
 6 ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի թիվ 51 արձանագրային որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման մասին հայեցակարգ»

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ երկրից մեկնելու և օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և դրա տարածքով տարանցելու մասին»,
- «Հայաստանի Հանրապետություն օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ներգաղթի մասին»,
- «Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն կատարվող աշխատանքային միգրացիայի կազմակերպման մասին»:

Հաջորդ օրենսդրական թերությանն լրջորեն անդրադարձել են ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները: Ըստ նրանց՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով ներկայացված սահմանումը հնարավորություն չի տալիս ոստիկանությանն արդյունավետորեն իրականացնել իր պարտականությունները, քանի որ դրանով հստակորեն չի սահմանվում և անդրադարձ չի կատարվում ապօրինի մուտքին կամ ապօրինի մուտքը կազմակերպելուն:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, 329-րդ հոդված՝ Պեղական սահմանն ապօրինի հատելը

1. Առանց համապատասխան փաստաթղթերի կամ թույլտվության Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մինչև երեք տարի ժամկետով:
2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կամ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:
3. Սույն հոդվածը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ օգտվելու համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված քաղաքական ապաստանի իրավունքից:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ներկայացուցիչը նշել է, որ նրանք անկանոն միգրացիայի վերաբերյալ քննություն սկսելու համար հաճախ ստիպված են լինում հղում կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածների, ինչն այդքան էլ արդյունավետ չէ միգրացիայի կարգավորման տեսանկյունից: Այդ է պատճառը, որ նրանք նախաձեռնել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածում հետևյալ բովանդակությամբ փոփոխություն կատարելը՝

Հոդված 329.1. Անօրինական միգրացիայի կազմակերպումը

1. Ապօրինաբար շահադիտական նպատակով օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտքի, Հայաստանի Հանրապետությունում գտնվել ու կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման (տեղափոխման) կազմակերպումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի, օտարերկրյա պետություն մուտքի, օտարերկրյա պետությունում գտնվելու կազմակերպումը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Շահադիտական նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի, Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտքի կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի գտնվելու կազմակերպումը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
3. 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված նույն արարքը, որը կատարվել է՝
 - 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ.
 - 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից.
 - 3) մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում.
 - 4) պաշտոնեական դիրքն օգտագործելով
 ... պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա»:

Այս համատեքստում տվյալ հոդվածի գործողության ոլորտը հատկապես լայն է և, ընդհանուր առմամբ, իրավական գործողությունների տեսանկյունից ընդգրկում է քննարկվող թեմայի անօրինական/հանցավոր կողմը: Օրենքում կատարված այս փոփոխության ընդունումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությանն առավել նպաստելու Հետընդունման համաձայնագրի կնքմամբ իր կողմից ստանձնած պարտավորությունների իրականացմանը:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև առաջարկել է Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի փոփոխությունների նախագիծ, որպեսզի դրա 3-րդ պարբերությունը վերաբերվի բոլոր ապաստան հայցողներին: Փոփոխությունների նախագծերը ներկայումս շրջանառվում են Կառավարությունում, և ընդունվելուն պես՝ Հայաստանի տարածք անօրինականորեն մուտք գործելու համար ապաստան հայցողներն այլևս չեն պատժվի տուգանքով, ինչը կարևոր քայլ է՝ Հայաստանի օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու առումով:

4. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

4.1 ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն հիմնահարցերի կարգավորման մեջ ներգրավված հաստատությունները և մարմինները կարելի է պայմանականորեն բաժանել երեք հիմնական խմբերի՝ պետական գերատեսչություններ, միջազգային կազմակերպություններ և քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Նշված բոլոր կազմակերպությունների միջև արդյունավետ փոխգործակցության արդյունքում է միայն հնարավոր համենի երկրում միգրացիոն հիմնախնդիրների արդյունավետ կարգավորմանը: Յուրաքանչյուր խմբի հիմնական գործառույթների ընդհանուր նկարագիրը ներկայացված է ստորև:

4.1.1 ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն հիմնահարցերի լուծման մեջ ներգրավված պետական գերատեսչությունների և գործունեության իրականացումը պաշտոնապես վերապահված են հետևյալ մարմիններին: Ստորև *հիմնականում* ներկայացված են անկանոն միգրացիայի հետ կապված հնարավոր հիմնահարցերով զբաղվող հետևյալ գերատեսչությունների պարտականությունները:

N	Պետական գերատեսչությունը	Միգրացիայի կարգավորման ոլորտում հիմնական գործառույթները
1	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության (ՏԿՆ) միգրացիոն պետական ծառայություն (ՄՊԾ) ⁷	<p>Մշակում և իրականացնում է միգրացիայի բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը, կանոնակարգերը և գործունեությունը:</p> <p>իրականացնում է օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի տրամադրման ոլորտում օրենքով վերապահված գործառույթներ և գործունեություն, ինչպես օրինակ՝ համապատասխան դիմումների քննարկում, առաջարկությունների տրամադրում և այլն:</p> <p>պետական գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակում ու իրականացնում է անօրինական միգրացիայի կանխարգելման ոլորտում համապատասխան ծրագրեր և գործունեություն:</p> <p>մշակում և իրականացնում է ազգությամբ հայերի վերադարձին աջակցելու և խթանելու ոլորտում Հայաստանի Հանրապետության համապատասխան քաղաքականությունը և գործունեությունը:</p> <p>իրականացնում է Հայաստանում միգրացիոն իրավիճակի գնահատում:</p> <p>միգրանտներին տրամադրում է տեղեկատվական և խորհրդատվական օժանդակություն:</p>

7 www.smsmta.am

2	<p>Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) հյուպատոսական վարչություն (ՀՎ)⁸</p>	<p>Հյուպատոսական վարչության միգրացիայի, արտոնագրային և իրավական բաժինները պատասխանատու են օտարերկրյա քաղաքացիներին էլեկտրոնային, դիվանագիտական և պաշտոնական մուտքի վիզաների տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) համար. օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները տրամադրում, երկարաձգում, փոփոխում և վերացնում են Հայաստանի Հանրապետության մուտքի վիզաները (...) պաշտպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (...) իրավունքները և օրինական շահերն օտարերկրյա պետություններում (...), ինչպես նաև՝ հայրենադարձության և հետընդունման հետ կապված հարցերում. համագործակցում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հետ՝ դիմումներն առցանց էլեկտրոնային տվյալների շտեմարանով ստուգելու նպատակով. աջակցում է Միգրացիոն պետական ծառայությանն ապաստան հայցողների դիմումների քննարկման և դիմողների նույնականացման հարցում:</p>
3	<p>Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ)⁹</p>	<p>Ազգային անվտանգության ծառայության անօրինական միգրացիայի դեմ պայքարի բաժինը (ԱՄՊԲ) և Սահմանապահ գործերի սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատը (ՍՎՍՋ) պատասխանատու են սահմանների կառավարման և վերահսկողության համար: Սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատը սահմանին իրականացնում է փաստաթղթերի ստուգում, ուսումնասիրում է սահմանների վրա ներկայացված ապաստանի դիմումները և ուղղորդում է ապաստան հայցողներին Միգրացիոն պետական ծառայություն, տեղեկացնում է Միգրացիոն պետական ծառայությանը և ոստիկանությանն ապաստան հայցողների մասին, կանխում է հանցավորությունը և անօրինական ներգաղթը, վարում է Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի (ՍԿՏՀ) տվյալների շտեմարանը:</p>

8 www.mfa.am

9 www.nss.am

<p>4</p>	<p>Հայաստանի Հանրապետության ոստիկանություն</p> <p>Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն (ԿՀՊԳՎ)¹⁰</p> <p>Անձնագրային և վիզաների վարչություն (ԱՎՎ)¹¹</p>	<p>Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը պատասխանատու է (...) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց վիզաների և կացության կարգավիճակի տրամադրման համար.</p> <p>Վերահսկում է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը Հայաստան, նրանց տարանցումը Հայաստանով և մեկնումը Հայաստանից.</p> <p>Կառավարում է միգրացիայի վերաբերյալ տեղեկատվական հոսքերը և այլ պետական գերատեսչությունների հետ առցանց ռեժիմով վարում է Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարանը.</p> <p>աջակցում է Միգրացիոն պետական ծառայությանն ապաստան հայցողների դիմումների քննարկման և դիմողների նույնականացման հարցում.</p> <p>զբաղվում է այն անձանց վտարմամբ, որոնց, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային կոնվենցիաներին համապատասխան, մերժվել է ապաստանի տրամադրումը.</p> <p>Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը քննում է պետական սահմանի ապօրինի հատման, կեղծ փաստաթղթեր օգտագործելու, մարդու թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեպքերը.</p> <p>Անձնագրային և վիզաների վարչությունը պատասխանատու է (...) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց անհրաժեշտ փաստաթղթեր (անձնագիր, բնակչությունը հավաստող վկայական և այլն) տրամադրելու, համապատասխան էլեկտրոնային տվյալների շտեմարան վարելու, պետական սահմանի անցման կետերում Հայաստանի Հանրապետության մուտքի վիզաներ տրամադրելու և դրանց գործողության ժամկետը երկարաձգելու, օրենսդրությանն ու միջազգային կոնվենցիաներին համապատասխան օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետությունից վտարելու համար.</p> <p>Անձնագրային և վիզաների վարչությունն ստանում ու քննարկում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումները, որոնք այնուհետև ներկայացվում են Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ.</p>
<p>5</p>	<p>Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզանների և կոչումների վարչություն (ՆՔՊԿՎ)¹²</p>	<p>իրականացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու կամ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան տալու (...) գործառույթները.</p>
<p>6</p>	<p>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՄՆ) «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն (ԶՊԾԳ)¹³</p>	<p>իրականացնում է զբաղվածության կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը և գործունեությունը.</p> <p>օժանդակում է աշխատանք փնտրող անձանց գտնելու աշխատանք, իսկ գործատուներին՝ գտնելու անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող մասնագետներին.</p> <p>իրականացնում է անձանց հատուկ խմբերին ուղղված ծրագրեր, ինչպես օրինակ՝ Հայաստան վերադարձող միգրանտների վերաինտեգրման ծրագրեր.</p> <p>Միջազգային կազմակերպությունների (ՄՄԿ) աջակցությամբ ստեղծել է երեք Միգրացիոն ռեսուրս կենտրոններ (ՄՌԿ) (Երևանում (Էրեբունի շրջան), Տավուշի մարզում (Իջևան քաղաք) և Արագածոտնի մարզում (Աշտարակ քաղաք)): Միգրացիոն ռեսուրս կենտրոնները պոտենցիալ միգրանտներին և վերադարձած արտագաղթածներին մատուցում են վերաինտեգրման ծառայություններ՝ տրամադրելով խորհրդատվական ծառայություններ, աշխատանքի հնարավորություններ, վերապատրաստման տարբերակներ և այլն:</p>

10 www.police.am
 11 www.passportvisa.am
 12 www.president.am
 13 www.employment.am

7	Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն (ՄՆ) ¹⁴	Սփյուռքի նախարարության նպատակը Հայաստան-Սփյուռք գործընկերության զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունն ամբողջությամբ և արդյունավետորեն մշակելը, իրականացնելը և շարունակաբար բարելավելը, ինչպես նաև պետական մարմինների գործունեությունը համակարգելն է: Միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցությամբ այն իրականացնում է արտերկրից հայերի հայրենադարձությանը և վերադարձին ուղղված հատուկ ծրագրեր. իրականացնում է Հայաստան հայրենադարձող սիրիահայերին և իրաքահայերին ուղղված հատուկ ծրագրեր. Դիմումն ստանալուց հետո Սփյուռքի նախարարությունը նախնական խորհրդատվություն է տրամադրում ներգաղթածներին և նրանց ուղղորդում համապատասխան կազմակերպություններ՝ հետագա վերաինտեգրման նպատակով:
---	---	---

4.1.2 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍՏՈՒԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՆՆԵՐԸ

Հայաստանում գործունեություն ծավալող մի շարք միջազգային կազմակերպություններ միգրացիան ներառել են այն գերակա ոլորտների իրենց ցուցակում, որոնց անդրադարձ է կատարվում տարբեր ծրագրերի միջոցով: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), Միավորված ազգերի կազմակերպության՝ փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ), Եվրոպական միությունը (ԵՄ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) և շատ այլ կազմակերպություններ պարբերաբար անդրադարձել են միգրացիային վերաբերող հարցերին իրենց ծրագրերում: Ավելին, միգրացիային վերաբերող հարցերին անդրադառնալը դարձել է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպությունների գրեթե բոլոր զարգացման նախաձեռնությունների՝ գորակա խնդիրներից մեկը:

Միևնույն ժամանակ, գրեթե բոլոր նախաձեռնությունները, որպես կանոն, անդրադառնում են միգրացիայի հարցին՝ արտագաղթի կամ քաղաքացիների վերադարձի և վերաինտեգրման տեսանկյունից: Անկանոն իմիգրացիայի հարցը չի եղել այդ կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, քանի որ մինչ այժմ այդ երևույթը տարածված չի եղել երկրում:

Մյուս կողմից՝ այդ հարցն ամբողջությամբ չի անտեսվել, և կատարվել են նաև հետաքրքիր քայլեր: Օրինակ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն իրականացրել է մի քանի համապատասխան գործողություն՝ (i) թերությունների վերլուծության վերաբերյալ զեկույցի կազմում՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ «Արևելյան Եվրոպայում ապաստանին առնչվող համակարգերի որակի բարելավման նախաձեռնություն» երկու տարվա ծրագրի շրջանակներում, (ii) քաղաքացիություն չունենալու վերաբերյալ ուսումնասիրություն, որն ավարտին է հասցվել անցյալ տարվա սկզբում՝ որպես ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից հանձնարարված և Հայ օգնություն միության կողմից կատարված հետազոտության արդյունք, և (iii) ՄԱԿ ՓԳՀ-ի՝ Փախստականների պաշտպանության և խառը միգրացիային առնչվող՝ 10 կետից բաղկացած ծրագրի կազմում, որով սահմանվում են նպա-

14 www.mindiaspora.am

տակներն ու որում ներառվում են առաջարկություններ այն գործողությունների վերաբերյալ, որոնք կարելի է ձեռնարկել համաշխարհային մակարդակում, և որի կիրարկումը պետք է համապատասխանեցվի ազգային համատեքստին:

Մինչդեռ, վիզային ռեժիմի ազատականացումը և ԵՄ-ի հետ Հետընդունման մասին համաձայնագրի կնքումը կարող են դեպի Հայաստանի Հանրապետություն անկանոն միգրացիայի լրացուցիչ վտանգ առաջացնել: Այս պնդումը հաստատվել է նաև հարցված փորձագետների և շահագրգիռ անձանց կողմից:

Միջազգային կազմակերպությունները սովորաբար իրականացնում են իրենց ծրագրերը Հայաստանում՝ միգրացիայի տարբեր ոլորտներում մասնագիտացած տեղական համապատասխան կազմակերպությունների ներգրավմամբ: Այս կազմակերպություններն իրականացնում են Հայաստանի Հանրապետություն վերադարձող՝ նախկինում արտագաղթած անձանց վերաինտեգրմանն ուղղված տարբեր ծրագրեր, աջակցում են իրենց մշտական բնակության վայրից պատերազմի կամ քաղաքական անկայունության պատճառով տեղափոխված էթնիկ հայերի վերաինտեգրման հարցում, իրականացնում են տարբեր հետազոտություններ և այլն: Առավել ակտիվ կազմակերպությունների շարքում կարելի է առանձնացնել՝ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնը, «Հայկական կարիտաս» ՀԿ-ն, Եվրասիա համագործակցության հիմնադրամը, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն, Հայկական կարմիր խաչի ընկերությունը, ՊանԱրմենիան Մեդիա Գրուպը և այլն:

Միննույն ժամանակ, անհրաժեշտ է կրկին կատարել նույն վերապահումը: Այս կազմակերպությունների կողմից իրականացվող գրեթե բոլոր ծրագրերի նպատակն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետությունից արտագաղթած բնակչության վիճակը բարելավելը և վերադարձի դեպքում նրանց վերաինտեգրման հարցում աջակցելն է: Հայաստանի Հանրապետության տարածքում անկանոն միգրացիայի խնդիրն մինչ օրս համապարփակ կերպով անդրադարձ չի կատարվել:

4.2 ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Անկանոն միգրացիային վերաբերող հարցերով զբաղվող տարբեր գործակալությունների և հաստատությունների միջև համագործակցության արդյունավետությունը գնահատվել է շահագրգիռ կազմակերպությունների համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացված որակական հարցազրույցների միջոցով: Մինչ այժմ, այդ համագործակցությունը գնահատվել է որպես բավականին արդյունավետ: Ներգրավված մարմիններն ապահովում են տեղեկատվության արդյունավետ փոխանակում և փաստաթղթաշրջանառություն, գործարկում են առցանց էլեկտրոնային տվյալների շտեմարաններ, համատեղ իրականացնում են միգրացիայի ոլորտում 2012-2016թթ. Գործողությունների ծրագիրը, մշակում և իրականացնում են ծրագրեր միջազգային կազմակերպությունների հետ և այլն:

Վերոհիշյալ Գործողությունների ծրագիրը ներառում է 147 հատուկ գործողություն և միջոցառում (83 գործողության իրականացումն սկսվել է 2012 թվականին, և դրանցից մի քանիսն արդեն իսկ ավարտվել են), որոնց նպատակն է

14 տարբեր ուղղություններով բարելավել միգրացիայի կարգավորման ոլորտը: Գործողությունների ծրագրի իրականացումը վերահսկվում է հատուկ ստեղծված մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: 2012 թվականի ընթացքում այս հանձնաժողովն ունեցել է 8 հանդիպում, որից 2-ին մասնակցել են նաև միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչները:

Գործողությունների ծրագրի իրականացումն առանց ինտենսիվ միջազգային համագործակցության այդքան արդյունավետ չէր լինի: Այդ գործընթացին մեծապես նպաստում են ՄԱԿ ՓԳՀ-ն, ԵԱՀԿ-ն, ԱՄԿ-ն (Մոսկվայի գրասենյակից) և ԵՄ-ն: Այս կազմակերպությունները տրամադրել են արժեքավոր տեխնիկական և մասնագիտական աջակցություն:

Ներգրավված կազմակերպությունների և մարմինների միջև համագործակցության վերաբերյալ աննշան դժգոհությունները, որոնք պարզվել են ուսումնասիրության ընթացքում, հիմնականում վերաբերում են այն հանգամանքին, որ որոշ գործառույթներ համընկնում և կրկնվում են, ինչպես նաև տեղեկատվական հոսքերի ուղացմանը, ինչը հիմնականում պայմանավորված է օտարերկրյա պետությունների դիվանագիտական մարմիններից տեղեկատվություն ստանալու հետ կապված ընթացակարգային ձգձգումներով: Սակայն, ներկայիս արդյունավետ իրավիճակը մեծապես պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում բնակվող անկանոն միգրանտների փոքր թվաքանակով: Իրական թերություններ կարող են ի հայտ գալ վիզայի ազատականացման և հետընդունման ընթացակարգերի ռեժիմների իրականացման դեպքում՝ 2014 թվականից սկսած:

4.3 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱՆՈՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԳՆԱԿԱՏՈՒՄԸ ՇԱՔԱԳՐԳԻՌ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ

Անկանոն միգրացիային վերաբերող հարցերի մասին շահագրգիռ անձանց կարծիքները միանշանակ չեն: Նրանց մեծ մասը չի կարծում, որ անկանոն միգրացիան լուրջ սպառնալիք է Հայաստանի համար: Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը գրավիչ չէ ներգաղթող անձանց համար, որոնց համար Հայաստանը կարող է հանդիսանալ ներգաղթելու համար լավ վայր: Լավագույն դեպքում, Հայաստանը կարող է դիտարկվել որպես տարանցման հնարավոր երկիր՝ հետագայում այլ երկրներ տեղափոխվելու նպատակով: Միգրանտները կարող են փորձել ձեռք բերել կացության կարգավիճակ Հայաստանում և այլ երկրներ (օրինակ՝ ԵՄ) ճանապարհորդելու նպատակով վիզայի համար դիմելու իրավունք: Կացության կարգավիճակ ստանալուն պես միգրանտները գործնականում ձեռք են բերում միևնույն իրավունքները, ինչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, այսինքն՝ օգտվում են ազատականացված վիզային ռեժիմից:

Դրա հետ կապված՝ հարցվողների մյուս մասի մտավախությունները դառնում են իրական: Հայաստանի Հանրապետության ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ-ն և ՀՀ ԱԱԾ-ն էական խնդիրներ են տեսնում՝ կապված ներգաղթող նման անձանց տարանցման հնարավորություն ընձեռելու հետ: Վտանգը շատ ավելի իրական է դառնում ԵՄ-ի հետ Հետընդունման մասին համաձայնագիր կնքելու համատեքստում: Տարանցման նպատակով ներգաղթի հետևանքով կարող է մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով տեղափոխման վտանգ առաջանալ, դա կարող է նպաստել երկրում անօրինական էթնիկ կուտակումներին, որոնք կարող են օգ-

տագործել Հայաստանի Հանրապետությունը որպես կենտրոն, որտեղից ծագում է անկանոն միգրացիան: Իր հերթին, Հետընդունման մասին համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է հետ ընդունել այն անձանց, որոնք կդառնան անկանոն միգրանտներ, եթե Հայաստանի Հանրապետությունից ժամանեն որևէ ԵՄ պետություն և ստանան կացության կամ ապաստանի մերժում:

ԱԱԾ-ն ավելի խորությամբ է վերլուծում հնարավոր ռիսկերը: Այսպես կոչված ռիսկային երկրներից եկող անձինք կարող են ժամանել Հայաստանի Հանրապետություն և սկսել ապաստանի/կացության իրավունքի տրամադրման վարչական վարույթ: Օրենսդրության համաձայն՝ այս գործընթացը (անկախ վերջնական արդյունքից) կարող է տևել մինչև 2 տարի: Այս ժամանակահատվածը բավարար է, որպեսզի հնարավոր անօրինական խմբավորումները երկրում ստեղծեն հանցավոր խմբեր: Այս խնդիրն ավելի է լրջանում Հայաստանի Հանրապետությունում միգրանտների համար նախատեսված այնպիսի հատուկ (փակ) կացարանների բացակայության պատճառով, որտեղ կպահվեն ներգաղթող նման անձինք, ինչը հնարավորություն կընձեռի նվազեցնելու և վերահսկելու հնարավոր հանցավոր խմբերի անօրինական գործունեությունը:

Հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը՝ համապատասխան պետական մարմինները հակված են խստացնելու վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության տարածք անկանոն այն միգրանտների ներհոսքի նկատմամբ (համենայն դեպս, որոշ երկրներից), որոնք ուղևորվում են այլ երկրներ: Այդ ռիսկերը կանխարգելելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունել է որոշում՝ *«Այն պետությունների ցանկը հաստատելու մասին, որոնց քաղաքացիները Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ ու հյուպատոսական հիմնարկներ և միայն հրավերի հիման վրա»* (ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի թիվ 329-Ն որոշում): Այս կանոնակարգի շնորհիվ գործնականում դժվարանում է անկանոն ներգաղթը Աֆրիկյան պետությունների մեծ մասից, Ասիական որոշ երկրներից, ինչպես նաև Չինաստանից և Հնդկաստանից (թեև վերջին երկու երկրներից դիմող անձանց դեպքում հրավեր չի պահանջվում)¹⁵:

15 Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության քաղաքացիները մուտքի վիզայի համար կարող են դիմել միայն օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ և հյուպատոսական հիմնարկներ, սակայն նրանցից հրավեր չի պահանջվում: Տես՝ http://www.mfa.am/u_files/file/consulate/Visa/Invitation_eng.pdf

5. ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄՄԿ-ի համաձայն՝ անկանոն միգրացիան սահմանվում է որպես օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը, գտնվելը կամ աշխատելը որևէ երկրում՝ չունենալով անհրաժեշտ թույլտվության կամ ներգաղթի վերաբերյալ կանոնակարգերով պահանջվող փաստաթղթեր: Հաջորդիվ անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի հետ կապված քանակական հարցերին: Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի վերաբերյալ առավել համապարփակ պատկերացում կազմելու նպատակով տրամադրված տեղեկատվությունը լրացվում է հետընդունման մասին դիմումների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ տվյալներով: Անկանոն կարգավիճակով միգրանտների յուրաքանչյուր խմբի վերաբերյալ վիճակագրական տվյալները ՄՄԿ-ին տրամադրվել են համապատասխան պետական մարմինների կողմից:

5.1 ՍԱՀՄԱՆ ՆԱԳՐՈՒՄԻ ՀԱՏԵԼԸ

2012-2013 թվականների (1-ին կեսի) ընթացքում ընդհանուր առմամբ անկանոն կարգավիճակով 300 միգրանտ է բացահայտվել Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում: Նրանց մեծ մասը Վրաստանի քաղաքացիներ են, որոնք Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու մերժում են ստացել ՀՀ ԱԱԾ-ի կողմից «Խոչընդոտ» օպերատիվ գործողության իրականացման շրջանակներում: Հայաստանի Հանրապետության պետական սահման մուտք գործելու հնարավորությունից զրկված անկանոն կարգավիճակով միգրանտների մանրամասն բաշխումը ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 1 - Օտարերկրացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց մուտքը Հայաստանի Հանրապետություն մերժվել է, և որոնք ձերբակալվել են պետական սահմանի վրա, 2012թ. հունվարի 1- 2013թ. հունիսի 30¹⁶

Մերժման պատճառը	Զվարթնոց միջազգային օդանավակայան	«Բազրատաշեն» անցման կետ	«Բավլրա» անցման կետ	«Գոգավան» անցման կետ	Երկաթգծի «Այրուս» կայարան	Ընդամենը
«Հետախուզում» օպերատիվ առաջադրանքով անցնող անձանց ցանկով անցելու պատճառով հայտնաբերվել և հանձնվել է ՀՀ Ոստիկանությանը ¹⁷	92	32	53	3	1	181
«Արգելք» օպերատիվ առաջադրանքով անցնող անձանց ցանկով անցելու պատճառով ՀՀ մուտքը արգելվել է ¹⁸	0	65 - Վրաստան 1- Իրան 1 - ՌԴ 1 - Սիրիա	2 - Վրաստան 1 - Հունաստան	3 - Վրաստան	2 - Վրաստան 1 - Շվեյցարիա	78
Հայաստանի տարածք մուտքը մերժվել է հետևյալ պատճառներով՝	31	0	0	3	7	41
<i>Սահմանն անցնելու համար համապատասխան փաստաթղթերի բացակայություն</i>	1 - Գվինեա 1 - ՌԴ 1 - Ուկրաինա 1 - Իրաք 1 - Գերմանիա 3 - Իրան	0	0	3 Քաղաքացիություն չունեցող անձինք ¹⁹	0	8
<i>Ամբողջությամբ կամ մասնակիորեն կեղծ փաստաթղթերը ներկայացնելը</i>	1 - Սենեգալ 1 - Կոտ Դիվուար	0	0	0	0	5

16 Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ազգային ծառայություն
 17 Այս անձինք բացահայտվել են սահմանին, ձերբակալվել և հանձնվել են Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը
 18 Այս անձանց մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք արգելվել է:
 19 Նիդերլանդների կողմից տրամադրված ճանիորդական փաստաթղթերը վավերական չեն Հայաստանի Հանրապետությունում

Անվավեր փաստաթղթերը ներկայացնելը	2 – Ֆրանսիա 1 – Բելգիա 1 – ԱՄՆ 1 – Իտալիա 1 – Իսպանիա 1 – Շվեյցարիա	0	0	0	0	7
ՀՀ մուտքի վիզայի բացակայություն	1 – Չինաստան 9 – Սիրիա 1 – Թուրքիա 1 – Գամբիա	0	0	0	19	
Չճանաչված պետության անձնագիրը ներկայացնելը	1 – Աբխազիա	0	0	0	0	1
Ուրիշ անձի անձնագիրը ներկայացնելը	1 – Իրան	0	0	0	0	1
ԸՆԴԱՄԵՆԸ	123	101	56	9	11	300

Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու մերժում ստացած անձանց մեծամասնությունը ՀՀ ԱԱԾ-ի այն անձանց հատուկ (նախազգուշական) ցուցակներում նշված անձինք են, որոնք գտնվում են քրեական հետապնդման մեջ կամ որոնք այլ պատճառներով համարվում են անցանկալի, հիմնականում՝ կապված ազգային անվտանգության խնդիրների հետ:

5.2 ԵՐԿՐՈՒՄ ԹՈՒՅԱՏՐԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՏՎԱԾԻՑ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՆԵՐԳԱՂԹԱԾ ԱՆՁԻՆՔ

Անկանոն կարգավիճակով միգրանտների մյուս խմբին են պատկանում այն անձինք, որոնց առանց թույլտվության Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու հանգամանքը բացահայտվել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում, երբ տվյալ անձինք փորձել են դուրս գալ երկրից: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 201 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օտարերկրացիների կողմից Հայաստանի Հանրապետությունում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով քնակվելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման կարգը խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկից մինչև 100-ապատիկի չափով»:

2012-2013 թվականների (1-ին կեսի) ընթացքում վերոնշյալ հոդվածը կիրառվել է 58 տարբեր երկրներից եկող 1,577 օտարերկրացիների (քաղաքացիություն չունեցող անձանց) նկատմամբ: Այս անձանց (որոնք որոշակի վերապահումով պետք է համարվեն անկանոն կարգավիճակով միգրանտներ) մանրամասն բաշխումը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 2 - Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու ժամանակ բացահայտված անձինք, 2012 թ. հունվարի 1-2013թ. հունիսի 30²⁰

ՀՀ	Տվյալ պետության քաղաքացիները	Անձանց թիվը
	Սիրիայի Արաբական Հանրապետություն	680
	Իրանի Իսլամական Հանրապետություն	232
	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	160
	Հնդկաստանի Հանրապետություն	53
	Ռուսաստանի Դաշնություն	50
	Քաղաքացիություն չունեցող անձինք	37
	Ֆրանսիայի Հանրապետություն	25
	Լիբանանի Հանրապետություն	25
	Թուրքմենիստան	23
	Հունաստանի Հանրապետություն	22
	Կանադա	18
	Թուրքիայի Հանրապետություն	17
	Ուկրաինա	16
	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	15
	Մեծ Բրիտանիա	13
	Նիդեռլանդների Թագավորություն	13
	Վրաստանի Հանրապետություն	10
	Իտալիայի Հանրապետություն	10
	41 այլ պետություններ (9 անձ կամ ավելի քիչ)	158
	Ընդամենը	1,577

20 Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն

Հայաստանի Հանրապետության տարածքը լքելու ժամանակ Հայաստանի Հանրապետության վիզային ռեժիմը խախտած անձանց (որոնք դարձել են անկանոն միգրանտներ) վերաբերյալ վիճակագրական տվյալները մանրամասնորեն մեկնաբանվել են հարցված փորձագետների կողմից: Սիրիայից ժամանած միգրանտների մեծ թիվը պայմանավորված է հիմնականում սիրիահայերի ներհոսքով՝ երկրում քաղաքական անկայունության և պատերազմի պատճառով: Սակայն, այս անձինք (Իրաքից, Սիրիայից և Լիբանանից եկող էթնիկ հայերը) օգտվում են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից երաշխավորված կարգավորման պարզեցված ռեժիմից:

Յուրաքանչյուր տարի տասնյակ հազար իրանցիներ այցելում են Հայաստանի Հանրապետություն տարբեր նպատակներով, ինչպես օրինակ՝ կրթության (վերաբերում է նաև հնդիկներին), զբոսաշրջության և բիզնես նպատակներով: Իրանցիներն իրականում կազմում են երկիր մուտք գործող ոչ հայ այցելուների ամենամեծ խումբը, ինչով էլ պայմանավորված է վիզային ռեժիմի խախտումների մեծ թիվը:

Ուսումնասիրված ժամանակահատվածում վիզային ռեժիմը խախտած անձանց մեկ այլ մեծ խումբ են կազմում սփյուռքահայերը, որոնք այցելել են իրենց ընկերներին և ազգականներին (կամ պարզապես զբոսաշրջիկներ), սակայն, թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար են գտնվել երկրում ու տուգանք են վճարել սահմանին: Միննույն ժամանակ, իրական անկանոն միգրացիայի տեսանկյունից, այս անձինք սույն ուսումնասիրության անմիջական առարկան չեն: Փաստացի, նույն պնդումը վերաբերում է նաև ԱՄՆ-ի, Կանադայի, Եվրոպական պետությունների, Ռուսաստանի և այլ երկրների քաղաքացիներին: Անկանոն կարգավիճակով իրական միգրանտները, փոխարենը, կենտրոնացած են «այլ երկրներ» խմբում, թեև նրանց թիվը կազմում է ընդամենը մի քանի տասնյակ մարդ:

5.3 ԱՊԱՍՏԱՆ ԵՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՀԱՅՑՈՂՆԵՐԸ

Ապաստան հայցողներն ու կացության կարգավիճակ ստանալու համար դիմող անձինք անկանոն կարգավիճակով միգրանտներ չեն այդ հասկացության ուղիղ իմաստով, սակայն մեծ է հավանականությունը, որ նրանց դիմումների մերժման դեպքում այդ անձինք կդառնան անկանոն կարգավիճակով միգրանտներ: Այդ իսկ պատճառով, նպատակահարմար է համարվել սույն ուսումնասիրության շրջանակներում այս երկու խմբի վերաբերյալ վիճակագրական տվյալներ ներկայացնելը: Վերջին ժամանակահատվածում ապաստան հայցողների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են ստորև՝

21 Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն

Աղյուսակ 3 - Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների վերաբերյալ վիճակագրական տվյալները, 2012թ.-2013թ. (9 ամիս)²¹

ՀՀ	Տվյալ պետության քաղաքացիները	2012				2013			
		Հայ- ցել է	Տրամա- դրվել է	Մերժ- վել է	Այլ ²²	Հայ- ցել է	Տրամա- դրվել է	Մերժ- վել է	Այլ
	Սիրիայի Արաբական Հանրապետություն	497	333	0	164	258	216	0	42
	Իրաքի Հանրապետություն	34	34	0	0	10	8	0	2
	Իրանի Իսլամական Հանրապետություն	14	3	7	4	8	0	1	7
	Լիբերիայի Հանրապետություն	9	0	1	8	0	0	0	0
	Կոտ Դիվուարի Հանրապետություն	5	0	3	2	1	0	0	1
	Կոնգոյի Ժողովրդական Հանրապետություն	4	0	2	2	0	0	0	0
	Կոնգոյի Հանրապետություն	3	0	3	0	0	0	0	0
	Թուրքիայի Հանրապետություն	3	0	1	2	0	0	0	0
	Գվինեայի Հանրապետություն	3	0	2	1	1	0	1	0
	Լիբանանի Հանրապետություն	3	3	0	0	0	0	0	0
	Վրաստանի Հանրապետություն	1	0	1	0	0	0	0	0
	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	1	0	1	0	0	0	0	0
	Մալիի Հանրապետություն	1	0	1	0	0	0	0	0
	Կամերունի Հանրապետություն	1	0	1	0	0	0	0	0
	Ընդամենը	579	373	23	183	278	224	2	52

Սիրիայից (ինչպես նաև Իրաքից) եկող ապաստան հայցողներն այս ցուցակում կրկին առաջատար դիրքերում են: Ակնհայտորեն այդ անձանց ճշող մեծամասնությունը էթնիկ հայեր են, որոնք ստիպված են գաղթել այդ երկրներից արդեն իսկ նշված պատճառներով: Հայաստանի Հանրապետություն նրանց գալը մեծապես ողջունվում է երկրում. պետությունը նրանց տրամադրել է մի շարք արտոնություններ, վերաինտեգրմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր են իրականացվում՝ Հայաստանի Հանրապետությունում նրանց կենսագործունեությունը վերականգնելու հարցում աջակցություն տրամադրելու համար: Սակայն, նրանց մի մասը (թեև դեռևս ոչ մեծ մասը) համապատասխան կարգավիճակ ստանալուց հետո նախընտրում է մեկնել Հայաստանի Հանրապետությունից ԵՄ պետություններ կամ այլ երկրներ: Այս անձինք հետընդունման մասով որոշակի ռիսկեր են ներկայացնում, և Հայաստանի Հանրապետությունը կա-

21 Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն

22 Այն անձինք, որոնց դիմումներին ընթացք է տրվել կամ որոնք հետ են վերցրել իրենց դիմումները, կամ որոնք, առանց հետ վերցնելու իրենց դիմումները, լքել են երկիրը

րող է ստանալ մի շարք հետընդունման դիմումներ, եթե նրանք օտարերկրյա պետու-
թյուններում չկարողանան կացության կարգավիճակ ձեռք բերել:

Եթե նշված ռիսկն առկա է միայն փոքր թվով սիրիահայերի պարագայում, ապա
այդ ռիսկը շատ ավելի մեծ է այլ ապաստան հայցողների դեպքում (հատկապես
աֆրիկյան երկրներից եկող):

**Աղյուսակ 4 - Օտարերկրացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք
ստացել են կացության տարբեր կարգավիճակներ, 2012թ.-2013թ. (1-ին կես)²³**

ՀՀ	Տվյալ պետության քաղաքացիները	Ստացել են ժամանակավոր կացության կար- գավիճակ	Ստացել են մշտական կա- ցության կար- գավիճակ	Ստացել են հատուկ կացու- թյան կարգա- վիճակ	Հատուկ կացու- թյան կարգա- վիճակը վերաց- վել է
	Իրան	1,688	171	347	337
	Հնդկաստան	666	13	1	0
	Ռուսաստանի Դաշ- նություն	393	436	25	7
	Սիրիա	265	171	331	577
	ԱՄՆ	223	99	181	39
	Վրաստան	217	155	9	6
	Ուկրաինա	163	104	5	0
	Թուրքմենիստան	78	26	39	1
	Ֆրանսիա	69	9	28	13
	Իտալիա	63	9	3	3
	Չինաստան	55	0	0	0
	Ֆիլիպիններ	53	0	0	0
	Գերմանիա	41	12	17	1
	Իսրայել	40	5	2	3
	Ուզբեկստան	37	10	1	1
	Լիբանան	36	28	28	126
	Իսպանիա	35	3	0	0
	Բելառուս	31	8	0	0
	Կանադա	28	17	46	10
	Ղազախստան	25	11	1	0
	Մեծ Բրիտանիա	24	3	18	1
	Հունաստան	21	23	1	2
	Եգիպտոս	21	4	9	45
	Նիդեռլանդներ	17	4	10	1
	Մոլդովա	17	3	0	0
	Բուլղարիա	16	1	0	0
	Արգենտինա	15	4	1	0
	Իրաք	15	5	11	57
	Լեհաստան	15	6	1	0
	Շրի Լանկա	15	0	0	0
	Ավստրիա	14	3	11	0
	Թուրքիա	14	3	12	2
	Բելգիա	11	1	2	0
	Բրազիլիա	11	0	0	0
	67 այլ երկրներ	195	49	63	19
	Ընդամենը	4,627	1,396	1,203	1,251

23 Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն

Հայաստանի Հանրապետությունում («Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն) տարբեր կացության կարգավիճակներ ստացած անձանց թիվը հասնում է մի քանի հազարի: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ անկանոն միգրացիայի տեսանկյունից այս անձինք ամենաքիչ ռիսկն ու վտանգը ներկայացնող խումբն են: Նրանք ցանկացած իրավաչափ նպատակով, ինչպես օրինակ՝ կրթությունը, ժամանակավոր կամ մշտական աշխատանքը, ընտանիքի վերամիավորումը և այլն, Հայաստանում գտնվելը օրինականացնելու մտադրություն ունեցող անձինք են: Նրանց դիմումները մանրամասնորեն ուսումնասիրվել են համապատասխան պետական մարմինների կողմից (այդ թվում՝ ՀՀ ԱԱԾ-ի), և համարվել է, որ դրանք համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:

Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստանալու համար ոչ բոլոր դիմումներն են բավարարվել միևնույն համապատասխան պետական մարմինների կողմից: Ուսումնասիրված ժամանակահատվածում կացության համար 238 դիմում մերժվել է, որոնցից 211-ը ներկայացվել են Իրանի քաղաքացիների կողմից: Հենց այս խմբին պատկանող անձինք կարող են ստեղծել անկանոն միգրացիայի ռիսկեր Հայաստանի համար՝ հետագայում առաջացնելով հետընդունման վտանգներ: Սակայն, նման անձանց թիվը զգալի չէ, իսկ ռիսկերը մինչ այժմ լավ կարգավորվել և նվազեցվել են:

5.4 ԹՐԱՖԻԿԵՆԳԸ ԵՎ ՄԱՔՍԱՆԵՆԳ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Մարդկանց թրաֆիքինգը և մաքսանենգ ճանապարհով տեղափոխումը Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի համատեքստում հետազոտման ենթակա հաջորդ հարցն է: 2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից իրականացվել է 22 վարույթ՝ մարդկանց թրաֆիքինգի հատկանիշներ պարունակող արարքների առնչությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 132, 132² և 132.3 հոդվածներ):²⁴ Նույն տվյալները 2013 թվականի համար դեռևս չեն ամփոփվել: Փորձագետների մի մասը նշել է, որ 2013 թվականի 9 ամսվա համար այս թիվը կազմում է 13 գործ, սակայն դա ենթակա է պաշտոնական հաստատման:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից քննված՝ մարդկանց թրաֆիքինգի բոլոր գործերով տուժող ճանաչված անձինք Հայաստանի քաղաքացիներ են: Նրանք ենթարկվել են մարդկանց թրաֆիքինգի Թուրքիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Շրի Լանկայում և Հայաստանի Հանրապետությունում: Ոչ մի պաշտոնական տեղեկատվություն չի ստացվել Հայաստանում օտարերկրացիների և (կամ) քաղաքացիություն չունեցող անձանց թրաֆիքինգի վերաբերյալ: Բացի դրանից, առկա չէ նաև պաշտոնական տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխման մասին:

5.5 ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Սույն ուսումնասիրության նպատակն է գնահատել Հայաստանում անկանոն միգրացիայի հետ կապված ներկայիս իրավիճակը՝ ԵՄ-ի և Հայաստանի Հանրապետության

²⁴ Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պաշտոնական կայք՝ www.police.am

տության միջև Հետընդունման մասին համաձայնագրի կնքման համատեքստում: Այս առումով, օտարերկրյա պետությունների կողմից պահանջվող հետընդունման գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծությունը նույնպես կարևոր է դառնում: Հայաստանի Հանրապետությունը 2000 թվականից սկսել էր ԵՄ որոշ պետությունների հետ առանձին երկկողմ միջազգային համաձայնագրեր կնքելու գործընթացը՝ մինչև 2013 թվականին ԵՄ-ի հետ Հետընդունման մասին համաձայնագիր կնքելը: 2010 թվականից ի վեր հետընդունման դիմումներ ստացվել են միայն 4 երկրներից: Հետընդունման դիմումների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 5 - Օտարերկրյա պետություններից ստացված հետընդունման դիմումները, անձ, 2010-2013թթ.²⁵

ՀՀ	Երկրներ	2010 թվական	2011 թվական	2012 թվական	2013 թվական (9 ամիս)	Ընդամենը
1.	Ռուսաստանի Դաշնություն	0	0	9	23	32
2.	Շվեյցարիա	0	0	3	0	3
3.	Շվեդիա	2	13	6	11	32
4.	Նորվեգիա	8	12	1	1	22
	Ընդամենը	10	25	19	35	89

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ օտարերկրյա պետությունների կողմից հետընդունման դիմումները ներկայացնելը չի նշանակում, որ տվյալ անձինք վտարվել են դիմում ներկայացնող երկրներից և հետ են ուղարկվել Հայաստանի Հանրապետություն: Իրականում, դրանք առավելապես դիմումներ են առանց պատշաճ թույլտվության օտարերկրյա պետություններում բնակվող որոշ անձանց ինքնությունը պարզելու համար: Հայաստանի Հանրապետությունում համապատասխան պետական մարմիններն ընթացք են տվել այդ դիմումներին. որոշ անձանց դեպքում հաստատվել է, որ նրանք Հայաստանում կացության կարգավիճակ ունեցող անձինք են, իսկ մյուսների ինքնությունն ընդհանրապես չի պարզվել: Ավելին, Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմինները նույնիսկ տեղյակ չեն նշված անձանց կապակցությամբ օտարերկրյա պետությունների ձեռնարկած հետագա քայլերի մասին:

²⁵ Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն

6. ԱՆԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

6.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐԸ

Անկանոն կարգավիճակով միգրանտների վերաբերյալ հետազոտությունն անցկացնելը բարդ առաջադրանք է ցանկացած երկրում՝ հաշվի առնելով այդ անձանց փաստացի անօրինական կարգավիճակը նրանց բնակության վայրերում: Անկանոն կարգավիճակով միգրանտ լինելը փաստացի նշանակում է խախտել որևէ երկրում գտնվելու, դրա տարածքով անցնելու կամ այդ երկիրը լքելու վերաբերյալ օրենքներն ու կանոնակարգերը: Այլ կերպ ասած, այդ անձինք համապատասխան պետական մարմինների կողմից ենթակա են վարչական քննության և քրեական հետապնդման: Որոշ անձինք ապաստան են հայցել և ներկայումս մերժում ստանալուց հետո ներգրավված են դատական գործերում: Այդ պատճառով անկանոն կարգավիճակով միգրանտները սովորաբար խուսափում են շփումներից և քննարկումներից, եթե դա իրապես անհրաժեշտ և անխուսափելի չէ:

Անկանոն կարգավիճակով միգրանտները քաջ գիտակցում են, որ ցանկացած սխալ շփում կարող է հետագայում խնդիրներ ստեղծել նրանց համար և նույնիսկ հանգեցնել երկրից վտարման: Այդ պատճառով, շատ դժվար էր անկանոն միգրանտներին համոզել մասնակցել որևէ հետազոտության: Սույն հետազոտության համատեքստում հարցումներն իրականացվել են լիարժեք անախուսության սկզբունքով, այսինքն՝ չեն պահանջվել կամ գրանցվել անուններ, ճշգրիտ բնակության վայրեր (հասցե), կոնտակտային տվյալներ, նկարներ և այլն: Հարցազրույցներն անց են կացվել հայերենով, ռուսերենով և անգլերենով՝ կախված այն բանից, թե որն էր ավելի հարմար հարցվողների համար: Հարցվողները կարող էին չպատասխանել ցանկացած անցանկալի հարցի:

Հաշվի առնելով հարցվողների փոքր թիվը (ընդամենը 8)՝ նրանց պատասխանների վիճակագրական վերլուծություն չի կատարվել: Հարցումներն առավելապես կենտրոնացվել են Հայաստանի Հանրապետությունում նրանց անկանոն կարգավիճակով պայմանավորված որակական խնդիրների վրա: Հարցազրույցների ընթացքում քննարկված հիմնական թեմաները վերաբերվել են Հայաստանում անկանոն կարգավիճակով միգրանտների հետևյալ առանձնահատկություններին. ընդհանուր բնութագիրը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, միգրացիայի պատճառները, վերջնական նպատակակետին առնչվող հարցերը, իրավունքների և կարիքների մասին իրազեկվածությունը:

6.2 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ելնելով անկանոն միգրացիայի միջազգայնորեն ընդունված սահմանումից՝ անկանոն կարգավիճակով միգրանտները, որոնք բնակվում են (աշխատում) Հայաստանի Հանրապետությունում, անցնում են երկրի տարածքով կամ լքում են այն, կարող են դասակարգվել հետևյալ հիմնական խմբերի.

1. ազգությամբ հայ օտարերկրացիներ, որոնք լքել են իրենց մշտական բնակության վայրը պատերազմի, քաղաքական անկայունության, կրոնական կամ

այլ ճնշումների պատճառով: Նման միգրանտների լավագույն օրինակ են սիրիահայերը կամ իրաքահայերը, որոնք գաղթել են Հայաստանի Հանրապետություն իրենց երկրներում իրականացվող լայնածավալ ռազմական գործողությունների պատճառով: Մինչ օրս այդ մարդիկ հիմնականում ժամանում են ընտանիքներով, ավելի հեշտորեն են շփվում տեղի բնակչության հետ, երկրում ունենում են ընկերներ և ազգականներ, վարձակալում են բնակելի տարածք, հարմարվում են տեղի կենսակերպին և այլն: Հայաստանի Հանրապետության պետական մարմինները (ինչպես նաև ընդհանուր բնակչությունը) առանձնակի դրական վերաբերմունք են դրսևորում այդ մարդկանց նկատմամբ և փորձում են վերադարձի և ինտեգրման հարցերում առավելապես աջակցել նրանց: Բոլոր պաշտոնական ընթացակարգերը պարզեցվել են նրանց համար, շատ ծառայություններ անվճար են և այլն: Սակայն, նույնիսկ ունենալով մի շարք արտոնություններ, նրանց մի մասը դարձել է անկանոն միգրանտ՝ հիմնականում թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար երկրում գտնվելու պատճառով, և այդ գործընթացը շարունակվում է:

2. *օտարերկրացիներ (ազգությամբ ոչ հայ), որոնք գաղթում են իրենց մշտական (կամ ժամանակավոր) բնակության երկրներից՝ պատերազմի, քաղաքական անկայունության, կրոնական (և այլ) ճնշումների կամ վար սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով*: Անկանոն կարգավիճակով միգրանտների այս խմբի նպատակը սովորաբար այնպիսի երկրներ տեղափոխվելն է, որոնք երաշխավորում են ավելի լավ սոցիալական պաշտպանություն և կենսապայմաններ (ինչպես օրինակ՝ Հյուսիսային Ամերիկան և ԵՄ երկրները), սակայն նրանք խուսափում են անմիջապես այդպիսի երկրներ մեկնելուց խիստ կանոնակարգերի և վտարման վտանգի պատճառով: Անկանոն կարգավիճակով այս միգրանտները նախընտրում են ժամանել Հայաստանի Հանրապետություն, հայցել և ստանալ ապաստան, դիմել կացության կարգավիճակի համար ու ստանալ այն և միայն դրանից հետո դիմել՝ իրենց վերջնական նպատակակետ երկրի վիզա ստանալու համար: Ազատականացված վիզային ռեժիմի հաստատումից հետո Հայաստանի Հանրապետությունն էլ ավելի գրավիչ կդառնա նման միգրանտների համար: Անկանոն կարգավիճակով այդ միգրանտները սովորաբար գալիս են Իրանից, աֆրիկյան և ասիական երկրներից, որոնք ընդգրկված են, այսպես կոչված, «ռիսկային երկրների» ցանկում:

3. *Հայաստանի համալսարաններում ուսանելու համար օտարերկրյա երկրներից եկած ուսանողները, որոնք մուտք են գործել մուտքի վիզայով և չեն ստացել ժամանակավոր կացության կարգավիճակ կամ ժամանակավոր բնակության թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար են գտնվել երկրում*: Մի քանի հազար օտարերկրյա ուսանողներ (այդ թվում՝ սփյուռքից) ներկայումս սովորում են Հայաստանի համալսարաններում (Երևանի պետական բժշկական համալսարանում, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում, Երևանի պետական լեզվաբանական համալսարանում և այլ պետական կամ մասնավոր ուսումնական հաստատություններում): Հայաստանի ուսումնական հաստատություններում ուսանելու համար ուսանողներ են գալիս Սիրիայից, Իրանից, Հնդկաստանից, ինչպես նաև ՌԴ-ից, ԱՄՆ-ից, ԱՊՀ երկրներից և այլն:

4. *տարբեր (հիմնականում հարևան) երկրներում բնակվող Հայաստանի քաղաքացիները/ազգությամբ հայերը, որոնք ժամանում են Հայաստանի Հանրապետություն կացության կարգավիճակ կամ նույնիսկ քաղաքացիություն (երկքաղաքացիություն) ստանալու համար՝ վերջնական նպատակ ունենալով տեղափոխվելու*

(հիմնականում սեզոնային աշխատանքի համար) այլ երկրներ: Հետաքրքրական է, որ այդ միգրանտների մեծամասնությունը գալիս է հարևան Վրաստանից: Նրանք բախվում են որոշակի խնդիրների, երբ սեզոնային աշխատանքի նպատակով տեղափոխվում են Ռուսաստանի Դաշնություն: Նրանք համարվում են անկանոն կարգավիճակ ունեցող անձինք այն պատճառով, որ կացության կարգավիճակ կամ քաղաքացիություն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի մի մասը կեղծվում է: Մինչդեռ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հատուկ վերաբերմունքը հայերի ներգաղթի հարցում, այդ անձինք լուրջ խնդիրներ չեն ունենում Հայաստանում: Նրանք սովորաբար գտնվում են Հայաստանի Հանրապետությունում կարճ ժամանակով և մեծ խնդիրներ չեն ստեղծում տեղական մարմինների համար:

5. *աշխատանքային միգրանտները, որոնք ժամանում են (անօրինական) սեզոնային (1 տարուց պակաս) աշխատանք կատարելու նպատակով:* Այդպիսի անձինք սովորաբար ժամանում են բրիգադներով (հիմնականում) շինարարության և գյուղատնտեսության (հողի մշակում) ոլորտներում աշխատելու նպատակով: Այս միգրանտները սովորաբար ապրում են իրենց աշխատավայրերում (կամ դրանց հարևանությամբ), չեն շփվում տեղի բնակչության հետ: Նրանց միակ նպատակը դրամ վաստակելն ու իրենց ընտանիքների համար դրամական փոխանցումներ կատարելն է: Սովորաբար, անկանոն կարգավիճակով միգրանտների այս խումբը պաշտոնապես չի ձևակերպում երկրում գտնվելու և աշխատելու հանգամանքը. նրանք նախընտրում են բացահայտվել պետական սահմանին աշխատանքն ավարտելուց հետո, վճարել տուգանքը և լքել երկիրը: Անկանոն կարգավիճակով այդպիսի միգրանտներ բացահայտվել են Հայաստանի Հանրապետությունում Վրաստանից (հիմնականում ազգությամբ հայեր), Տաջիկստանից, Չինաստանից և այլն: Հետաքրքրական է, որ այդ միգրանտներին հիմնականում ներգրավում են ճանաչված և խոշոր տեղական բիզնեսները, որոնք, սակայն, փնտրում են իրենց ծախսերը նվազեցնելու լրացուցիչ (նաև անօրինական) եղանակներ:
6. *անօրինական աշխատանքով զբաղված միգրանտները, որոնք հրավիրվում են տեղական բիզնեսների կողմից կարճաժամկետ որոշակի առաջադրանքներ կատարելու նպատակով:* Հետազոտության ընթացքում պարզվել է, որ այդ անձինք աշխատում են գիշերային ակումբներում, հացի փռերում, մետաղամշակման արտադրամասերում, ավտոմեքենաների վերանորոգման կետերում և այլն: Հայաստանի Հանրապետությունում նրանք գտնվում են անկանոն կարգավիճակով, քանի որ կատարում են ոչ պաշտոնական (երբեմն անօրինական) աշխատանք. նրանք պաշտոնապես չեն ձևակերպում Հայաստանում աշխատելու փաստը: Շատ հաճախ անկանոն կարգավիճակով այս միգրանտները ծագում են սլավոնական երկրներից, Ռուսաստանից, Վրաստանից և Իրանից, թեև բավարար շատ դեպքեր են գրանցվել նաև այլ երկրներից:
7. *Օտարերկրացիներ (նաև ազգությամբ հայ), որոնք այցելում են Հայաստան՝ տուրիզմի և իրենց ընկերներին ու ազգականներին հանդիպելու նպատակով և թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար են գտնվում երկրում:* Անկանոն կարգավիճակով այս միգրանտները սովորաբար բացահայտվում են պետական սահմանին՝ Հայաստանի Հանրապետությունը լքելու փորձ կատարելիս: Այս անձինք սովորաբար պետք է տուգանք վճարեն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն (50-100 հազ. ՀՀ դրամ), և այնուհետև միայն դուրս գան երկրից: «Անկանոն կարգավիճակով» այդպիսի միգրանտներ գրանցվել են տասը երկրներից:

Ակնհայտ է, որ անկանոն միգրանտների տեսակները չեն սահմանափակվում վերը նշված կատեգորիաներով: Մինչդեռ, դրանք անկանոն միգրանտների այն հիմնական խմբերն են, որոնք ներառում են հարաբերականորեն զգալի թվով մարդկանց: Անկանոն կարգավիճակով միգրանտների ցանկացած տեսակ հնարավոր ռիսկեր է ենթադրում երկրում միգրացիայի կարգավորման տեսանկյունից, սակայն այդ ռիսկերի աստիճանը տարբեր է: Նման ռիսկերից մեկը անկանոն կարգավիճակով միգրանտների հավանական արտագաղթն է այլ երկրներ, ինչը կարող է Հայաստանի Հանրապետության համար ստեղծել հետընդունման հետ կապված ռիսկեր և խնդիրներ: Հաշվի առնելով Հետընդունման մասին համաձայնագիրը՝ վերը նշված միգրանտների յուրաքանչյուր խմբի ռիսկայնության գնահատումը ներկայացված է ստորև:

6.3 ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈՒ

Անկանոն միգրացիայի առնչությունը Հետընդունման մասին համաձայնագրին եղել է տարբեր պետական գործակալությունների և մարմինների ներկայացուցիչների հետ քննարկման հիմնական հարցերից մեկը: Գրեթե բոլոր հարցվողները նշել են, որ Հետընդունման մասին համաձայնագրի կնքումը էական ազդեցություն չի ունենա ոչ Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի, ոչ էլ համապատասխան գործակալությունների և մարմինների աշխատանքի վրա: Այս տեսակետը հիմնված է երկու հանգամանքի վրա: Առաջին հերթին, Հայաստանի Հանրապետությունը մինչ այդ կնքել է հետընդունման մասին համաձայնագրեր առանձին ԵՄ պետությունների հետ, և ԵՄ-ի հետ Հետընդունման մասին համաձայնագրի կնքումով շատ փոփոխություններ չեն կատարվել: Երկրորդ՝ անկանոն միգրացիայի իրական ծավալները Հայաստանի Հանրապետությունում մեծ չեն, և անկանոն միգրացիայի առնչությունը հետընդունման ռիսկերի հետ բավականին անուղղակի և անէական է:

Հարգելով տարբեր պետական գործակալությունները և մարմինները ներկայացնող փորձագետների կարծիքները՝ այնուամենայնիվ պետք է նշել, որ այդ մոտեցումը մի փոքր անհեռատես է: Այդ տեսակետը հաստատվել և հաստատվում է միայն այլ հավասար պայմաններում: Մինչդեռ, բավականին կարճ ժամանակահատվածում մեծ թվով սիրիահայերի ներգաղթը լավագույն ապացույցն է այն բանի, որ ներկայիս իրավիճակը կարող է անսպասելիորեն և արագ փոխվել: Այս հակառակ դիրքորոշումը հիմնավորվում է առնվազն երկու ուժեղ փաստարկներով՝ Միջին Արևելքում և Աֆրիկյան երկրներում անկայուն քաղաքական իրավիճակով և ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի ազատականացմամբ, որը կդառնա հերթական գրավիչ գործոն արդեն ավելի մեծ թվով հնարավոր անկանոն կարգավիճակով միգրանտների համար:

Ինչպես արդեն նշվել է, հետընդունման ռիսկեր գոյություն ունեն սույն ուսումնասիրության ընթացքում Հայաստանի Հանրապետությունում բացահայտված անկանոն միգրանտների գրեթե բոլոր հիմնական խմբերի պարագայում: Միևնույն ժամանակ, որոշ խմբերի դեպքում այդ ռիսկերը շատ ավելի մեծ են: Այս առումով, ողջամիտ է ռիսկի աստիճանը անկանոն միգրանտների տարբեր խմբերի համար առանձին գնահատել:

Աղյուսակ 6 – Հայաստանի Հանրապետությունում անկանոն կարգավիճակով միգրանտների տարբերի խմբերի համար հետընդունման ռիսկերի գնահատումը

ՀՀ	Հայաստանում անկանոն կարգավիճակով միգրանտների տեսակները	Հետընդունման ռիսկերը	Հիմնավորումը
1	Ազգությամբ հայ օտարերկրացիներ, որոնք գաղթում են պատերազմի, քաղաքական անկայունության կամ ճնշումների պատճառով	Բարձր	Որպես առաջնային տարբերակ՝ սպիտաքահայերը սովորաբար ընտրում են Հայաստանի Հանրապետություն արտագաղթելը, քանի որ վստահ են, որ կընդունվեն և ապաստան կստանան իրենց հայրենիքում: Միևնույն ժամանակ, սոցիալ-տնտեսական վիճակը Հայաստանի Հանրապետությունում այդքան էլ լավ չէ: Պետությունը բավարար միջոցներ չունի մեծ թվով ներգաղթող անձանց ապաստան և առաջին անհրաժեշտության սոցիալական ծառայություններ տրամադրելու համար: Ներգաղթող հայերի ինտեգրումը մեկ այլ խնդիր է: Նրանցից շատերը հայերեն չեն խոսում և ծանոթ չեն տեղի օրենսդրությանն ու սովորույթներին: Սակայն, աշխատանքը և եկամուտ ստանալը թերևա ամենալուրջ խնդիրներն են: Այս և մի շարք այլ պատճառներով այդ մարդիկ ստիպած են մտաձել ԵՄ պետություններ և Հյուսիսային Ամերիկա արտագաղթելու մասին, որտեղ նրանք ակնկալում են ստանալ ավելի բարձր մակարդակի սոցիալական աջակցություն, եկամուտ ստանալու և ինտեգրման այլ հնարավորություններ:
2	Օտարերկրյա անձինք (ազգությամբ ոչ հայ), որոնք գաղթում են պատերազմի, քաղաքական անկայունության կամ ճնշումների պատճառով	Բարձր	Ոչ հայ օտարերկրացիների մեծամասնությունը Հայաստանի Հանրապետությունը չի համարում բնակության վերջնական վայր: Սովորաբար, դրանք այն մարդիկ են, որոնք չեն կարողացել գաղթել ԵՄ պետություններ և Հյուսիսային Ամերիկա (կամ մեկ այլ վայր) և փորձում են օգտագործել Հայաստանի Հանրապետությունը որպես միջոց՝ իրենց նախընտրած երկրներ գնալու համար: Հայաստանի Հանրապետությունում չմնալու հիմնական պատճառը աշխատանքի և եկամուտ ստանալու սահմանափակ հնարավորություններն են:
3	Օտարերկրյա երկրներից եկող ուսանողները	Միջինից մինչև բարձր	Տեղի բարձրագույն ուսումնական հաստատություններում մեծապես ուշուժնվում է կրթական ծառայություններ գնող օտարերկրյա ուսանողների ընդունելությունը: Բոլոր խոշոր համալսարաններն իրենց ծառայություններ են առաջարկում օտարերկրացիներին: Այլ կերպ ասած, Հայաստանի Հանրապետությունում համալսարան ընդունվելու համար բավարար միջոցներ ունեցող ցանկացած օտարերկրյա անձ (չնայած՝ բոլոր դիմում-հայտերը ստուգվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից) կարող է ստանալ ժամանակավոր կացության կարգավիճակ և դառնալ հնարավոր արտագաղթող ու ստեղծել հետընդունման ռիսկեր:

4	Այն հայերը, որոնք ժամանում են կարգավիճակ կարգավիճակ ստանալու նպատակով, որպեսզի արտագաղթեն Ռուսաստանի Դաշնություն	Ցածրից մինչև բարձր	Դրանք հիմնականում այն հայերն են, որոնք մշտապես բնակվում են Վրաստանում և սեզոնային աշխատանքով զբաղվելու նպատակով (շինարարության ոլորտում) արտագաղթում են Ռուսաստանի Դաշնություն: Ունենալով վրացական փաստաթղթեր՝ այս անձինք Ռուսաստանի Դաշնությունում բախվում են էական խնդիրների, մինչդեռ հայ միգրանտ աշխատողներն ավելի լավ են ընդունվում ռուսական պետական մարմինների կողմից:
5	Անօրինական աշխատանքով զբաղվող օտարերկրացիներ	Ցածր	Դրանք այն մարդիկ են, որոնք ներգրավվում են հայ գործարարները՝ որպես էժան աշխատուժ, աշխատատար ոլորտներում (ինչպես օրինակ՝ շինարարություն կամ գյուղատնտեսություն) կարծաժամկետ աշխատանքներ կատարելու համար: Անկանոն կարգավիճակով այս միգրանտները հավկած չեն պաշտոնապես ձևակերպելու Հայաստանի Հանրապետությունում գտնվելու համագամանքը և աշխատանքն ավարտելուց հետո սովորաբար վերադառնում են իրենց մշտական բնակության վայր:
6	Որոշակի առաջադրանքներ կատարելու նպատակով հրավիրված միգրանտ աշխատողները	Առկա չէ	Անկանոն կարգավիճակով այս միգրանտները սովորաբար 2 շաբաթից մինչև մի քանի ամիսների ընթացքում հետամուտ են լինում հավելյալ եկամուտի ձեռքբերմանը: Նրանք, ավելի հստակ, հյուր-աշխատողներ են և դառնում են անկանոն կարգավիճակ ունեցող միգրանտներ հիմնականում Հայաստանի Հանրապետությունում իրենց աշխատանքը պաշտոնապես ձևակերպելուց խուսափելու պատճառով: Այս անձինք սովորաբար վերադառնում են իրենց մշտական բնակության վայր և գրեթե չեն ներկայացնում հետընդունման որևէ ռիսկ:
7	Զբոսաշրջիկներն ու այցելուները, որոնք թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար են գտնվում երկրում	Առկա չէ	Այս անձինք, որպես կանոն, չեն ներկայացնում հետընդունման որևէ ռիսկ:

7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

7.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ (ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐ)

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄՄԿ)

Հայաստանում անկանոն միգրացիայի գնահատումը

Անկանոն կարգավիճակով միգրանտների համար նախատեսված հարցաշար

Հարցազրույցն անցկացնողի անունը

Հարցաթերթիկ թիվ—

Ամսաթիվ՝ (ամիս/օր/տարի) _____

Հարցազրույցի անցկացման վայրը՝ _____

Հարցվողի անունը՝ _____

Հարցվողի քաղաքացիությունը՝ _____ (երկիր)

Հարցվողի ծագումը _____ (ծննդյան երկիր)

Հարցվողի էթնիկ պատկանելիությունը՝ _____

Սեռը՝ Արական Իգական

Տարիքը՝ _____ տարեկան Ծննդյան ամսաթիվը (ոչ պարտադիր)՝ _____

Հարցվողի բնութագիրը՝

Որքան ժամանակ եք գտնվում Հայաստանում:		Որքան ժամանակ ունեք անկանոն կարգավիճակ:			
Որո՞նք են անկանոն կարգավիճակով միգրանտ դառնալու պատճառները.	Անօրինական մուտքը	Թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար երկրում գտնվելը	Փաստաթղթերի կորուստը	Այլ	Այլ
Ներկայիս բնակության վայրը (հասցե)՝					
Ներկայիս բնակության վայրի տեսակը՝	Սեփական բնակելի տարածք	Վարձակալված բնակելի տարածք	Ընկերների/ազգականների բնակելի տարածք	Կացարան/ապաստան	Այլ
Ձեր ներկայիս բնակության վայրում դուք ապրում եք մշտական հիմունքներով:		Որքան ժամանակ եք ապրում ձեր ներկայիս բնակության վայրում:			
Որևէ գործունեությամբ զբաղվու՞մ եք:	Ոչ	Այո	Վարձատրություն ստանում՞ եք:	Ոչ	Այո
Ինչպիսի կրթություն եք ստացել:		Ընդհանուր առմամբ, որքան ժամանակ եք սովորել:			
Ընտանիք ունե՞ք (մեկ տնային տնտեսության հաշվով):	Ոչ	Այո	Ինչպիսին է Ձեր ընտանիքի կազմը (մեկ տնային տնտեսության հաշվով):	<input type="checkbox"/> Պապիկ <input type="checkbox"/> Տատիկ <input type="checkbox"/> Հայր <input type="checkbox"/> Մայր <input type="checkbox"/> Այլ	<input type="checkbox"/> Ամուսին <input type="checkbox"/> Երեխաներ ____ <input type="checkbox"/> Եղբայր ____ <input type="checkbox"/> Քույր <input type="checkbox"/> Այլ
Ձեր ընտանիքի անդամներից քանիսն են դրամ վաստակում:		Ձեր ընտանիքի անդամներից քանիսն են գտնվում ձեր խնամքի տակ:			
Ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկը Ձեզ հեն է:	Ոչ	Այո	Որտե՞ղ է այդ անձը/անձինք այժմ:		

Սոցիալ-տնտեսական կարգավիճակը

<p>Ինչպիսին էր Ձեր սոցիալ-տնտեսական կարգավիճակը մինչև արտասահման տեղափոխվելը:</p>	<input type="checkbox"/> Շատ լավ	<input type="checkbox"/> Լավ	<input type="checkbox"/> Նորմալ	<input type="checkbox"/> Վատ	<input type="checkbox"/> Շատ վատ
<p>Որքան էր կազմում Ձեր միջին ամսական եկամուտը մինչև արտասահման տեղափոխվելը:</p>		<p>Եվրո կամ ԱՄՆ դոլար</p>	<p>Որքան էր կազմում Ձեր տնային տնտեսության միջին ամսական եկամուտը մինչև Ձեր՝ արտասահման տեղափոխվելը:</p>	<p>Եվրո կամ ԱՄՆ դոլար</p>	
<p>Ինչպիսին էր Ձեր սոցիալ-տնտեսական կարգավիճակը Ձեզ շրջապատող անձանց շրջանում:</p>	<input type="checkbox"/> Միջինից լավ <input type="checkbox"/> Միջին	<input type="checkbox"/> Միջինից վատ <input type="checkbox"/> Միջինից վատ	<p>Ինչպիսին էր Ձեր տնային տնտեսության սոցիալ-տնտեսական կարգավիճակը Ձեզ շրջապատող տնային տնտեսությունների շրջանում:</p>	<input type="checkbox"/> Միջինից լավ <input type="checkbox"/> Միջին	<input type="checkbox"/> Միջինից վատ <input type="checkbox"/> Միջինից վատ
<p>Ինչո՞վ էիք զբաղվում մինչև արտասահման տեղափոխվելը:</p>	<input type="checkbox"/> Գործազուրկ <input type="checkbox"/> Ոչ վարձու աշխատող <input type="checkbox"/> Ժամանակավոր աշխատող <input type="checkbox"/> Մշտական աշխատող	<p>Ո՞րն է Ձեր մասնագիտությունը:</p>		<p>Աշխատե՞լ եք Ձեր մասնագիտությամբ:</p>	<p>Այո Ոչ</p>
<p>Ի՞նչ հիմնական սեփականություն եք ունեցել մինչև արտասահման տեղափոխվելը:</p>	<input type="checkbox"/> Բնակարան <input type="checkbox"/> Տուն <input type="checkbox"/> Հողատարածք	<input type="checkbox"/> Ավտոմեքենա <input type="checkbox"/> Տրանսպորտային միջոց <input type="checkbox"/> Տան պարագաներ	<input type="checkbox"/> Գյուղատնտեսական կենդանիներ <input type="checkbox"/> Առևտրի կետ <input type="checkbox"/> Բիզնես		

--

Միգրացիային վերաբերող հարցերը

Նախկինում երբևիցե գաղթել եք:	Ոչ	Այո	Քանի՞ անգամ եք գաղթել նախկինում:		
Ո՞ր երկրներում եք եղել նախկինում:			Ինչու՞ եք ընտրել այդ երկրները:		
Կապ պահպանե՞լ եք Ձեր տնային տնտեսության հետ գաղթելուց հետո:	Ոչ	Այո	Ինչպե՞ս եք կապ պահպանել Ձեր տնային տնտեսության հետ:	<input type="checkbox"/> Կանոնավոր հեռախոսազանգեր <input type="checkbox"/> Հազվադեպ հեռախոսազանգեր <input type="checkbox"/> Կանոնավոր նամակներ <input type="checkbox"/> Հազվադեպ նամակներ <input type="checkbox"/> Այլ	<input type="checkbox"/> Կատարված դրամական փոխանցումներ <input type="checkbox"/> Ստացված դրամական փոխանցումներ <input type="checkbox"/> Այլ
Ի՞նչ զգացմունքներ ունեք Ձեր տնային տնտեսության անդամների նկատմամբ:		<input type="checkbox"/> Մի փոքր կարոտում եք	<input type="checkbox"/> Շատ եք կարոտում	<input type="checkbox"/> Այդքան էլ չեք կարոտում	
Ո՞րն էր այս անգամ Ձեր հայրենի երկիրը լքելու հիմնական պատճառը:					
Ի՞նչ պլաններ ունեք ապագայի համար:	<input type="checkbox"/> Օրինական կարգավիճակ ստանալ Հայաստանում <input type="checkbox"/> Հայաստանից մեկնել մեկ այլ երկիր <input type="checkbox"/> Հայաստանից մեկնել հայրենի երկիր		Ու՞ր եք նախատեսում գնալ: (երկիր)		
Կփորձե՞ք կրկին գաղթել:		Ոչ	Այո		

Հայաստանին կամ վերջնական նպատակակետին առնչվող հարցերը

Արդյո՞ք գաղթել եք Հայաստան անմիջապես Ձեր հայրենի երկրից:	Ոչ	Այո	Ինչու՞ եք գաղթելու համար ընտրել Հայաստանը:		
Որտեղից՞ եք:		Ինչու՞ անմիջապես չեք գնացել Ձեր վերջնական նպատակակետ երկիր:			
Որքան՞ լավ եք տեղեկացված Ձեր վերջնական նպատակակետ երկրի մասին:	<input type="checkbox"/> Շատ լավ <input type="checkbox"/> Ոչ այդքան լավ <input type="checkbox"/> Շատ վատ		Որո՞նք են/էին տեղեկատվության Ձեր աղբյուրները:	<input type="checkbox"/> Պաշտոնական աղբյուրներ <input type="checkbox"/> Ընկերներ ու ազգականներ <input type="checkbox"/> Այլ	<input type="checkbox"/> ԶԼՄ-ներ <input type="checkbox"/> Այլ միգրանտներ <input type="checkbox"/> Այլ

Իրավունքների և կարիքների մասին իրազեկվածությունը

Որքանո՞վ եք իրազեկված Ձեր իրավունքների մասին:	<input type="checkbox"/> Շատ լավ <input type="checkbox"/> Ոչ այդքան լավ <input type="checkbox"/> Շատ վատ		Որո՞նք են/էին տեղեկատվության Ձեր աղբյուրները:	<input type="checkbox"/> Պաշտոնական աղբյուրներ <input type="checkbox"/> Ընկերներ ու ազգականներ <input type="checkbox"/> Այլ	<input type="checkbox"/> ԶԼՄ-ներ <input type="checkbox"/> Այլ միգրանտներ <input type="checkbox"/> Այլ
Ինչպիսի՞ աջակցության կարիք ունեք ներկայումս:					
Ինչպիսի՞ աջակցություն կցանկանայիք ստանալ Ձեր հայրենի երկիր վերադառնալու դեպքում:			Կփորձե՞ք կրկին գաղթել:	<input type="checkbox"/> Միանշանակ այո <input type="checkbox"/> Ավելի շուտ այո <input type="checkbox"/> Ավելի շուտ ոչ <input type="checkbox"/> Միանշանակ ոչ	
Ինչպիսի՞ աջակցության կարիք կունենայիք այլ երկիր ուղևորվելիս:					

**ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄՄԿ)
Հայաստանում անկանոն միգրացիայի գնահատումը**

Հարցաթերթիկ (ուղեցույց) փորձագետների հետ հարցազրույցի համար

Հարցվողի անունը՝ _____

Հարցվողի պաշտոնը՝ _____

Ամսաթիվը _____

1. Հայաստանում անկանոն միգրացիայի կարգավորման օրենսդրական համակարգը

1. Հայաստանում անկանոն միգրացիայի կարգավորմանն ուղղված իր գործունեությունն իրականացնելու ընթացքում ի՞նչ օրենսդրական ակտեր է կիրառում Ձեր կազմակերպությունը:
2. Որո՞նք են Հայաստանում անկանոն միգրացիայի կարգավորման ոլորտում Ձեր կազմակերպությանը վերապահված գործառույթները:
3. Ընդհանուր առմամբ որքանով է ներկայիս օրենսդրական համակարգը նպաստում անկանոն միգրացիայի ոլորտում Ձեր կազմակերպության գործառույթների արդյունավետ իրականացմանը: Որո՞նք են Ձեր կազմակերպության արդյունավետ աշխատանքի համար հիմնական իրավական խոչընդոտները:
4. Ի՞նչ փոփոխություններ պետք է կատարվեն Հայաստանի օրենսդրական համակարգում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման վերաբերյալ ԵՄ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրի արդյունավետ կատարումն ապահովելու համար:
5. Ինչպիսի՞ն է եղել վերը նշված համաձայնագիրը կնքելու ազդեցությունը Ձեր կազմակերպության աշխատանքի վրա:
6. 2011 թվականի նոյեմբերին ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 1593-Ն որոշումը՝ հաստատելով Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականությունը և դրա գործողությունների ծրագիրը: Ի՞նչ գործողություններ են կատարվել Ձեր գործակալության կողմից մինչ օրս:

2. Հայաստանում անկանոն միգրացիայի կարգավորման ինստիտուցիոնալ համակարգը

7. Ինչպիսին է Ձեր կազմակերպության կառուցվածքը, և ո՞ր կոնկրետ ստորաբաժանումներն են ներգրավված անկանոն միգրացիայի կարգավորման հարցերում: Որո՞նք են դրանց հիմնական պարտավորությունները: Ինչպե՞ս են համագործակցում այդ ստորաբաժանումները:
8. Ո՞ր մյուս պետական և այլ կազմակերպությունների հետ եք դուք համագործակցում անկանոն միգրացիայի կարգավորման ոլորտում: Որքա՞ն արդյունավետ է այդ համագործակցությունը: Որո՞նք են խնդիրները և դրանց պատճառները:

3. Հայաստանում անկանոն միգրացիայի քանակական ցուցանիշները (ոչ պարտադիր. եթե հարցվողները տիրապետում են այդպիսի տեղեկության)

9. Սահմանի անօրինական հատման քանի՞ դեպք է կանխվել (արգելվել) Ձեր կազմակերպության կողմից 2012-2013թթ. ժամանակահատվածում (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):
10. Ըստ Ձեզ, անկանոն կարգավիճակով քանի՞ միգրանտ կար Հայաստանում 2012-2013թթ. ժամանակահատվածում: Նրանցից քանի՞սն են բացահայտվել որպես անկանոն կարգավիճակով միգրանտներ սահմանը հատելիս, և նրանցից քանի՞սն են դարձել անկանոն կարգավիճակով միգրանտներ երկիր մուտք գործելուց հետո (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):
11. Հայաստանում առանց թույլտվության բնակվող քանի՞ անկանոն կարգավիճակով միգրանտ է վերադարձվել ծագման երկիր (կամ այլուր) Ձեր կազմակերպության կողմից 2012-2013թթ. ժամանակահատվածում (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):
12. Քանի՞ օտարերկրացի է դիմել ապաստան ստանալու համար 2012-2013թթ. ժամանակահատվածում (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):
13. Քանի՞ հայց է բավարարվել և քանի՞ հայց է մերժվել 2012-2013թթ. ժամանակահատվածում (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):
14. Քանի՞ օտարերկրացի է դիմել ժամանակավոր, մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար 2012-2013 թթ. ժամանակահատվածում (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):
15. Քանի՞ դիմում է բավարարվել և մերժվել 2012-2013թթ. ժամանակահատվածում:

16. Քանի՞ հետընդունման դիմում է ստացվել 2012-2013թթ. ժամանակահատվածում և ո՞ր երկրներից: Ի՞նչ հետագա ընթացք են ստացել այդ դիմումները:
17. Մարդկանց թրաֆիքինգի քանի՞ դեպք է գրանցվել և քննվել Ձեր կազմակերպության կողմից 2012-2013թթ. ժամանակահատվածում (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):
18. Մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխման քանի՞ դեպք է գրանցվել և քննվել Ձեր կազմակերպության կողմից 2012-2013թթ. ժամանակահատվածում (ոչ պարտադիր. ըստ ծագման երկրների, տարիքի և սեռի, քաղաքացիության և այլն):

7.2 ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿ

Ուսումնասիրության ընթացքում այցելել ենք հետևյալ փորձագետներին և հարցազրույց ենք անցկացրել նրանց հետ

Աղյուսակ 7 - Հարցազրույցի մասնակցած հիմնական փորձագետների ցանկը

N	Անունը	Կազմակերպությունը	Պաշտոնը
	Քրիստինա Գալստյան	ՄՄԿ	Ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ղեկավար
	Տիգրան Պետրոսյան	ՀՀ ոստիկանություն	Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ
	Արմեն Պետրոսյան	ՀՀ ոստիկանություն	Անօրինական միգրացիայի դեմ պայքարի բաժնի պետ, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն
	Արթուր Մխիթարյան	ՀՀ ոստիկանություն	Անօրինական միգրացիայի դեմ պայքարի բաժնի պետի տեղակալ, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն
	Նորայր Աբգարյան	ՀՀ ոստիկանություն	Ոստիկանական միջազգային համագործակցության բաժնի պետի տեղակալ
	Նորայր Մուրադխանյան	ՀՀ ոստիկանություն	Անձնագրային և վիզաների վարչության պետ
	Ներսես Գրիգորյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատի կապի և տեղեկատվական համակարգի գծով ավագ սպա
	Մանվել Մայիլյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատի շտաբի պետ
	Գագիկ Եգանյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ
	Պետրոս Աղաբաբյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն	Ապաստանի հարցերի բաժնի պետ
	Վահե Զիլավյան	ՀՀ սփյուռքի նախարարություն	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
	Միեր Բադալյան	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության միգրացիայի բաժնի վարիչ

Արմեն Գալստյան	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն	Տնօրեն
Լենա Հալաջյան	Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն	«Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի ղեկավար
Վահան Բուռնազյան	Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն	Դոցենտ
Ռուզան Արշակյան	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն	Ծրագրերի համակարգման բաժնի պետ

7.3 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը

Աղյուսակ 8 - Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկը

N	Փաստաթղթի անվանումը
	Անկանոն միգրացիային վերաբերող միջազգային կոնվենցիաներ, համաձայնագրեր, արձանագրություններ
	«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիր, 2013թ.
	Հայաստանի Հանրապետության և տարբեր երկրների միջև կնքված հետընդունման մասին համաձայնագրեր, 2001-2010թթ.
	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, 1986թ.
	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 1995թ.
	«Սահմանապահ զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2001թ.
	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2002թ.
	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, 2003թ.
	«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2006թ.
	«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2008թ.
	Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիային վերաբերող ՀՀ կառավարության որոշումներ
	Անկանոն միգրացիայի նվազեցմանն ուղղված գործնական միջոցներ, Եվրոպական միգրացիոն ցանց, 2012թ. Հոկտեմբեր
	Անկանոն միգրացիան Եվրոպայում. ԵՄ քաղաքականությունը և հիմնարար իրավունքների մեջ բացը, Եվրոպական քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոն
	ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2007թ.
	Անկանոն միգրացիան և Հայաստանից մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխումը, ՄՄԿ, 2002թ.
	Անկանոն ներգաղթ Տնտեսություն և քաղաքականություն, Ֆրանկ Դուվել, 2011թ.
	Անկանոն միգրացիա, Մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխումն ու մարդու իրավունքները Դեպի փոխկապակցվածություն, Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ, 2010թ.
	Անկանոն միգրացիան Եվրոպայում, Միգրացիայի հարցերով տրանսատլանտյան խորհուրդ, ՄԲԻ, 2011թ.
	Ավստրիայում անօրինականորեն բնակվող երրորդ երկրների քաղաքացի հանդիսացող անձանց հաշվարկման գործակից, ՄՏՀԻ, 2009
	«Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման վերաբերյալ հայեցակարգ», 2011թ.

	Անկանոն միգրացիայի հետևանքները, Պետական քաղաքականության ուսումնասիրության ինստիտուտ, 2011թ.
	Պակիստանում անօրինական միգրացիայի, մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխման ու թրաֆիքինգի վերաբերյալ ելակետային ուսումնասիրություն, Եվրոպական միության AENEAS ծրագիր, 2004-2006թթ.
	Միգրացիա և զարգացում, ՄՄԿ, 2009թ.
	Միգրացիան Ռուսաստանի և ԵՄ-ի միջև Անկանոն կարգավիճակով միգրանտների վերաբերյալ փոքրածավալ ուսումնասիրությունից կատարված եզրակացությունները քաղաքականության առումով, ՄՄԿ, 2010թ.

Միգրացիայի միջազգային կազմակերպություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԿԱՆՈՒ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հրատարակման համար նախապատրաստվել է ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության Ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կողմից

Հեղինակ՝ Թարգմանությունը՝	Վահե Մամբրեյան «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության
Տեխնիկական խմբագիր՝ Տիտղոսային թերթ՝	Շողիկ Գալստյան Արամ Ուռուտյան

